30

ՏԱՐԻՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱՒԹԵԱՆ ԸՆԴՈՐՁԱԿ

թարգմանեալ յօր՝ .։ ալ

Ի Հ. ԱՒԳՍԵՆՏԻՈՍԷ Վ. ԳՈՒՐՃԵՆ՝ԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՏՈՐ. Գ.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՔ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1869

ՏԱՐԵՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ

5

ՏԱՐԵՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ

թարգմանաբար յօրինեալ

Ի Հ. ԱԼԵՔՍԵՆՏԻՈՍԷ Վ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Հատոր Գ.

A 1/14374

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1869

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԽՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՑՆ

Իմաստասիրութեան պատմութիւնն պատկեր մի է ամէն գարերու երևելի իմաստասիրաց կարծիքներուն՝ իմաստասիրական մեծամեծ խնդրոց վրայ, ինչպէս են մարդկային հոգւոյն բնութեանն, Աստուծոյ գոյութեան ստորոգելեացն, մարդուս միտքն առ ճշմարիտն և կամքն առ բարին ուղղելու միջոցներուն վրայ։

Ինչպէս որ իմաստասիրութիւնն մարդկային զարգացման ուրիշ մասերէն կորոշուի իր առարկայովն և իր սեպհական ոճովն, այսպէս է նաև իմաստասիրութեան պատմութիւնն ալ, թէ և պատմութեան միւս ճիւղերուն հետ ալ կապակցութիւն ունի։ Իր մասնաւորն այն չէ որ աշխարհին սկիզբէն 'ի վեր ինչ որ մարդուս միտքն

խորհեր գրեր և սորվեցուցեր է՝ ամէնն ալ բոլանդակէ. նմանապէս օտար են իրմէ դպրութեան և արուեստից հրաշակերտներն, կրօնական գաւանանքն և քաղաքական անցքերն. այլ միայն կուզէ ցուցընել թէ մարդուս ազատ միտքն ինչ Ջանքեր ըրած է Աստուծոյ և իր անձին ծանօթութեան բարձրանալու համար։

Իմաստասիրութեան պատմութեան օգտակարութիւնն.

Ընդհանրապէս դարու մի ոգին՝ նոյն դարու մէջ ընդունելի եղած վարդապետութիւններէն կը կախուի, և ազգի մի օրինաց և սովորութեանց փոփոխութեանց առաջին պատճառն ալ գաղափարաց ներքին շարժումներն է։ Ակէ կը հետևի որ իմաստասիրութեան պատմութիւնն՝ իրև տարերք ընդհանուր պատմութեան, անհերքելի օգտակարութիւն ունի, և ամէն դարու և ամէն ազգի օրէնսդրութեանցն արուեստից, կրօնից և սովորութեանց վրայ պայծառ լոյս մի կը սփռէ։ — Բայց մասնաւորապէս օգտակար է նոյն իսկ իմաստասիրութեան համար. ա. Անով իմաստասէրն օգուտ կը քաղէ իրմէ առաջ եղած խելացի մարդկանց փորձերէն և աշխատանքներէն՝ որ նոյն բաներուն վրայ հոգներ են։ բ. Անոր ձեռքն առանդելով շատ

մի ճշմարտութիւններ՝ զորս ինքն չէր կրնար գտնել, և հիմա գտնելը փնտռելու կարօտ չէ, ժամանակ կուտայ անոր իր ուժն ու ջանքն նոր և անծանօթ իրայ վրայ ծողմելու։ գ. Այն մոլորութեանց առջևն կառնու՝ որոնց մէջ կրնայ ընկնիլ՝ եթէ անոր ցցուցնէր որ կան այնպիսի հաճոյական երևցած կարծիքներ՝ որոնց հետևանքն անճոռնի և արտառոց բաներ առաջ կը բերեն։ դ. Խմաստասէրն վհատութենէ կը պահէ, և հարկաւոր ապահովութիւնն կուտայ՝ ընդդիմախօսից համբերելու, ցուցընելով որ իւր կարծիքն ընդուներ ու պաշտպաններ են ամէն դարուց խորագոյն հոգի մարդիկն։ ե. Վերջապէս խմաստասիրութեան պատմութիւնն մտայ և արտի պատուական հանդամանքն կը զարգացնէ՝ մտայ արութեան ընդարձակութիւն և խորութիւն տալով, համեստութիւն, ներողամտութիւն և յարդութիւն շնչելով երևելի անձանց արդեանցն, առանց յարգութեան շափազանցութիւնն իր ազատութիւնն կորսնցուցնել տալու. վասն զի ամէն երևելի խմաստասէրք ալ յաճախ խաբուած ըլլալով՝ բարերարաց պէս գտնոնք պատուելու ենք, չէ թէ սարկի պէս հնազանդելու։

Խմաստասիրութեան պատմութեան առաջին գրոց.

Խմաստասիրութեան պատմութիւնն իր ոճին նկատմամբ իրաց գիտութիւն մի է, և զանիկայ ուսանելոյ եղանակն պիտի ըլլայ գիտողութիւնն։

Գիտելու իրերն ալ գրութիւններն են որոնց առարկայն, ոճն, ընդհանուր ոգին և գլխաւոր լուծմունքն այնպիսի կէտեր են՝ զորս պէտք է որ պատմագիրն գիտէ ու քննէ։ Օրինակի համար խմաստասիրի մի վարդապետութիւններն քննած ժամանակ՝ պէտք է առաջուց գիտնայ թէ արդեօք այն խմաստասէրն մտաց օրինաւոր սահմանն ընդունած է թէ չէ, արդեօք փորձառութեան կողմն աւելի միտած է թէ հայեցողութեան, որ առաձնութեան վրայ աւելի գրաղելու աշխատաւոր է, և որպէս և ինչ յաջողութեամբ զանոնք լուծեր է։ Այս մտաթ և դժուար կէտերս լուսաւորելու համար ամէն մէկ խմաստասիրաց ժամանակին և ազգին ծանօթութիւնն շատ հարկաւոր է, նմանապէս թէ որ վարդապետներու հետևեր է, և ինքն ալ ինչ բնութեան և սովորութեանց տէր է եղեր։ Հարկաւոր կէտերէն մէկն ալ նոյն խմաստասիրին գրած կամ խօսած լեզուին գիտութիւնն է, և զործածած նոր բառից ճիշդ նշանակութիւնն։

Իսկ եթէ բան մի չէ գրած, կամ գրուածն մեզի չէ հասած՝ իր վարդապետութիւնն ճանչնալու համար պէտք է դիմել օտար վկայութեանց՝ որոց յարգն կրնայ խնայցուիլ պատմական քննաբանութեան սովորական կանոններովն։

Երբոր պատմիչն այս ճամբայն բաներով շատ մի գրութիւններ կը հաստատէ, գանոնք իրարու հետ բաղդատելու է՝ որպէս զի իմանայ թէ յորմէ՞ կը միտրանին և յորմէ՞ զանազանին։ Որոնք որ նման են անոնցմով ազանդ մի կամ դպրոց մի կը ձեւանայ՝ որուն սովորաբար այն իմաստասիրին անունն կը տրուի՝ որուն վարդապետութիւնն նախագաս եղած է։ Շատ յաջորդական ազանդներէ՝ շրջան մի կը ձեւանայ, և շատ շրջաններէ մեծ դար մի։ Այս բաժանմունքս հաստատելէն ետև՝ կը մնայ քննել այն օրէնքն՝ որ ազանդի մի հաստատութեան և անկման պատճառ եղած են, և որով շրջանները ու դարերն իրարու յաջորդած են. հոս պիտի գտնուին գլխաւորապէս ներքուստ ներգործութիւն կամ մտածութիւնը բաժնիս՝ որուն կանոնն է՝ ինչպէս ամէն տեղ, իսկական շարժում մի առաջ երթալ, օրինաւորապէս քննելով և հաստատելով իրերէն ոչ առաջ անցնելով և ոչ ետև մնալով։

Սակայն փորձառական ոճն որչափ ալ օգտակար ըլլայ՝ իմաստասիրութեան պատմութեան վրայ յարմարելով՝ անկատար

հետեւանքներ միայն առաջ կրնայ բերել՝ եթէ պատմաբանն գրութիւններն լուսաւորելու և քննադատելու համար հոգեխուսական զօրաւոր գիտութիւն չունենայ։ Արդեւս միտքն բնագիր մի է՝ զոր ամէն իմաստասէր կուզէ օրինակել, ուստի այս շատ վարդապետութիւններն աղէկ հասկընալու և գտնելու համար՝ պէտք է գիտնայ՝ թէ որ մասին մէջ այս անձին բնագիրն առաջ բերած է։ Ասանց այս ծանօթութեան՝ իմաստասիրութեան պատմութիւնն անօգուտ ցանկ մի կըլլայ, և օգտակար գիտութիւն մի անկէց առաջ չգար։

Իմաստասիրութեան պատմութեան գլխաւոր շրջաններն.

Այս նախընթաց տեսութիւններս ամբողջացնելու համար՝ պէտք է իմաստասիրութեան ամբողջ պատմութիւնն իր գլխաւոր շրջաններուն վրայ բաժնենք։

Դարու մի իմաստասիրութեան արտայայտիչ նշաններն որոշելու տարերքն ասոնք են. ա. Այն աշխարհներն կամ ազգերն որոնց մէջ ծագեր է այն իմաստասիրութիւնն. բ. այն արտաքին դէպքերն որ իր ծագման կամ յառաջադիմութեան ժամանակ հանդիպած են. գ. այն խնդիրներն որոնց վրայ մէջ եղած է. դ. այն ո-

ձերն որ գործածուած են. և. այն լուծմունքն որ ընդունելի եղած են։

Բայց դար մի որոշելու համար ասոնք ամէնն ալ նոյն գործութիւնն չունին։ Ամէնէն առաջ դիտելու կէտն է խնդիրներն, ոճերն և լուծմունքն, որովհետև իմաստասիրութեան հիմունքն ալ ասոնք են։ Սակայն պատմութեան ընդհանուր դիպուածոց ալ միտ դնելու է. որովհետև քաղաքական կամ կրօնական մեծամեծ յեղափոխութեանց ձայնն՝ գաղափարաց վրայ ալ մեծ ազդեցութիւն ունի։

Շատ պատմիչներ այս սկզբունքս ընդունելով իմաստասիրութեան պատմութիւնն իրեք մեծամեծ դարերու կը վերածեն. դար նախկին, դար միջին և դար արդի [1]։

Նախկին դարն կը սկսի նոյն իսկ իմաստասիրութեան ծագմանէն, այսինքն արևելքից հին ազգաց իմաստասիրութենէն և կը տևի արևելեան իմաստասիրութիւն՝ որուն վրայ շատ ծանօթութիւն չունինք և թուականներն ալ անյայտ են։ Յետոյ կուգայ յունական իմաստասիրութիւնն իր ծագմանէն մինչուան վերջն. և իրեք շրջան կը բաժնուի. առջինն Թագլեսէն (600 տարի Ն. Ք.) մինչուան Սոկրատ (400 տարի Ն. Ք.) ևբ-

1 Արդի եւրոպական դասագրոց մէջ ոմանք դարն շրջանի և շրջանն ալ դարու տեղ գործածած են։

կրորդն Սոկրատէն ինչուան քրիստոսա-
կան թուականն. և երրորդն քրիստոսա-
կան թուականէն ինչուան Զուստինիանոսի
թագաւորութիւնն՝ որ 529ին գոցել տու-
աւ յունական իմաստասիրութեան Աթեն-
քի վերջին դպրոցն, և ստիպեց անոնց
գլուխներն՝ երթալու արաբացւոց պաշտ-
պանութեան տակն։

Դարն միջին կամ միջին դարու իմաս-
տասիրութիւնն որ դպրոցական կամ դասա-
կան իմաստասիրութիւն կըսուի, կըսկսի Մե-
ծին Կարոլոսի թագաւորութենէն (Թ դա-
րու սկիզբէն) և կը վերջանայ Կոստանդ-
նուպօլսոյ առման ժամանակ։ Այս դա-
րուս մէջ իմաստասիրութիւնն աստուա-
ծաբանութեան հպատակ է. և երբ եկե-
ղեցական աւանդութիւնն կը թողու՝ տակ-
նորդն փոխելով Արիստոտելի իշխանու-
թեան տակ կիյնայ։

Հնգետասաներորդ դարու վերջերն և
ամբողջ վեշտասաներորդ դարուն մէջ վե-
րանորոգութեան շատ փորձեր կըլլան՝ որ
մասաւորապես մեծ յեղափոխութեան և ի-
մաստասիրութեան պատմութեանն նոր դա-
րու մի նախընթաց նշաններն կը սեպուին։
Այս դարս ալ որ է Արդի դարն՝ կը սկսի
եօթնեւտասաներորդ դարուն Պաքոնի և
Կարդեսիոսի ձեռօք և ինչուան մեր օրերս
կը տևէ։

ԴԱՒԹԻՆ ԴԱՐ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Արևելեան իմաստասիրութիւն հին ազգաց.

Իմաստասիրութիւն Հեբրայեցւոց. — Յայտնի է որ իմաստասիրութեան անուամբ ճիշտ ինչ որ կը հասկցուի նոյն գիտութիւնն Հեբրայեցւոց մէջ չկար. որովհետև իրենց աւանդութեանց և գրոց մէջ անարատապահուած էին այն էական ճշմարտութիւններն որք ուրիշ ազգաց մէջ եղած ու ապականած էին, և որոնք իմաստասիրաց քննութեանն գլխաւոր նիւթն եղած էին։ Սակայն Մովսէս և անկէ ետև եկած մատենագրաց գրոց մէջ բովանդակած են հեբրայական իմաստասիրութեան հիմունքը, թէ Աստուծոյ գոյութեան և թէ աշխարհիս և մարդուս արարչութեան և թէ բարոյական ճշմարիտ վարդապետութիւններն։ Իսկ իմաստասիրութեան ուրիշ մասանցն մէջ երևի թէ Հեբրայեցիք շատ յառաջադիմութիւն մի ըրած չեն՝ մինչև Բաբելոնի գերութենէն դառնալու առնին։ Բայց անկէց ետքն շատ բան ուսին 'ի Պարսից և 'ի Յունաց, ու այլ և այլ հերձուած բաժնուելցան ինչպէս փարիսեցւոց, սադուկեցւոց և յեսսէանց, որոնց ուղղն անցին յետոյ խաչելութեանը կամ ծածկապէս բուսածներն։ Փարիսեցիներն ըս-

տոյիկեանց վարդապետութիւնն մանաւանդ թէ շնականաց ազանդն կընդունէին, սաղուկեցիք եպիկուրեանցն, և յետնեանք պիւթագորականացն. այս վերջինքներս ճգնաւորի կեանք կը վարէին։

Իսկ ծածկագիտութիւնն կը զանազանէր 'ի տեսական և 'ի գործնական. առջինն գաղտնի աւանդութիւն մի էր աստուածայնոց՝ եգիպտացի և քաղդէացի խորհրդոց հետ խառն, որոնց մէջ պիւթագորեան և պղատոնական իմաստասիրութիւնքն շատ բան կար. երկրորդն ալ նոյնպէս գաղտնի աւանդութիւն մի էր, և Աստուծոյ անուանց և գրոց ձայնից շարադասութեամբն մեծամեծ հրաշքներ ընել կը խոստանային։

Իմաստասիրութիւն Քաղդէացւոց. — Քաղդէացիք գիտութեանց մէջ առաջին ազգ կը սեպուին, և առջի իմաստուններն Զրադաշտ անունով մէկն եղած է, ըստ խորենացւոյ ժամանակակից Նեբրովթայ։ Նոյնպէս Ռէլա ալ՝ որ աստղաբաշխութեան սկզբնահայրն կը սեպուի, ժամանակն անստոյգ է։ Իր իմաստասիրութեան մնացորդներն որ ինչուան մեզ հասած են՝ բնազանցական և բարոյական նիւթոց վրայ կը խօսին։ Բայց թէ 'ի Քաղդէացւոց և թէ ուրիշ հին ազգաց ամբողջ բարոյական գրուած մի չունինք, այլ միայն առածներ և վէճիներ. իսկ բնազանցական նիւթոց վրայ այսինքն Աստուծոյ և աշխարհիս սկզբանն վրայ և-

զածներն անհիմն խօսքեր են միայն։ Վեհ-
հագոյն Աստուած մի կընդունէին, և ան-
կէց յառաջագոյնալ շատ մի մեծաւոր էա-
կաց գոյակարգութիւն. աշխարհս ալ ե-
րեք կը բաժնէին, գգայի, օդային և ար-
փային, և երեքին ալ երեք յատկութիւն
կուտային, ձև, լոյս և շարժումն. ուստի և
երեք թիւն ալ խորհրդաւոր բան մի սե-
պուած էր։ Ուրիշներն ալ կըսեն թէ Քաղ-
դէացիք զաշխարհս իբրև Աստուծոյ ծա-
գումն կընդունէին, և բոլոր բնութեան
մէջ տարածեալ հրեղէն տարրն ալ Աս-
տուած կը սեպէին. ասկէց առաջ եկու
արեւապաշտութիւնն և կրակապաշտութիւնն.
որովհետև արեւն ալ հրոյ կենդրոն կը սե-
պէին։ Դարձեալ կը հաստատէին թէ մար-
դիկ կրնան աստեղաբնակ կամ օդաբնակ
ոգւոց հետ հաղորդիլ և անոնցմէ շատ
ծանօթութիւններ ընդունիլ որուն մոգու-
թիւն կամ քաւդէութիւն կըսէին. և աս-
տեղաց դրքէն ու շարժմունքէն գուշակու-
թիւններ կընէին, ասով և աստղաբաշխա-
կան գիտութիւնն ալ շատ յառաջ գնաց
անոնց մէջ. որով ցուցին արեւուն ըն-
թացքն կենդանակամարին աստեղատանց
մէջէն, մոլորակ աստղերն որոշեցին, ա-
նոնց և լուսնի երևոյթներն բացատրեցին,
և աստղաբաշխական երեք հոչակաւոր
շրջաններն հաստատեցին, շաբ, ներ, և աս
ըսուած։ Աս գիտութիւններս Յունաց մէջ
մացնողաց առջինն եղաւ Պերոզ քաղդէա-

ցին Պատրիարքս եղբայրասիրին ժամանակին 280 տարի Ն. Փ.

Խմառասիրութիւն Պարսից եւ Հայոց. — Այս երկու ազգաց խմառասիրութիւնն միասնագ կը դնենք, որովհետեւ մեր նախնի ազգային խմառասիրութեան վրայ մասնաւոր յիշատակարան չունինք, և կերևի թէ Պարսից հետ նոյն պիտի ըլլայ։

Քաղդէացւոցմէ անցան գիտութիւններ մեզի և Պարսից, զորս և ծագիկցուց ուրիշ Զրադաշտ անուանով մէկն Դարէհ Վշտասպեանի ժամանակ, որուն անուանով կան նաև պատգամներ, Զենտ կամ Զենտաւէսդա և Սադգերն բառած հաշտարար գրքերն. այս գրոց հետեւողներն զանդիկ կըսուէին, զորս կը յիշեն նաև մեր Եղիշէ և Ագնիկ վարդապետներն։ Սոնք երկու ներհակ սկիզբ կընդունէին. մէկն բարոյ արարիչ Որմիզդ, բառ մեզ Աբամազդ բառած, և միւսն արարիչ չարի Արիմն կամ Խարաման բառած. ուրիշ երբորդ մաղ, ասոնց մէջ միջնորդ, Միհր բառած, որ է սէր կամ Աստղիկ և արեգակն. որոնց առասպելաց վրայ երկայն կը գրեն հանդերձ եղծմամբ միրայգրեալ հայրարարութիւնքն։ — Բարոյականին մասին կընդունէին հոգւոյ անմահութիւնն, հանդերձեալ կեանքն, և բարեաց և չարեաց հատուցմունքն, ինչպէս որ միրապատութիւններէ և պատմութիւններէ յայտնի է. Պատն ալ իր Քաղաքավարութեան

գրոց վերջը կը յիշէ Էր հայկազին կամ Սրբոյ Գնդեցկին առասպելն՝ որ պատերազմի մէջ մեռնելով և սատն օր անարատ պահուելով՝ տասներկու օրէն նոր իր խարուկէն նորէն կը կենդանանայ, և հոն եղջիւրուն կը պատմէ բարի և չար հոգւոց գտանուածն, և վարձուց և պատժոց հատուցմունքն իւրաքանչիւր իր կենաց մէջ ըրածին համեմատ։ Որուն մէջ կերևնայ նաև մարմնոց յարութեան հաւատն և հոգեփոխութեան կարծիքն [1]։ — Այս կարծիքս ապէր անգամ Յունաց մէջ մտուց Պոթան անունով մէկն. ինչուան հիմա ևս Պարսից մէջ կը գտնուին մոգուց հին իմաստասիրութեան հետևողներ, զորս Տաճիկք կեպր կամ կեավուր կանուանեն։

Իմաստասիրութիւն Աբարացւոց. — Նախնի Աբարացիք կամ Սարայեցիք ևս ունէին իրենց մոգերն, և շատ գիտութեամբ ծաղկած էին 'ի վաղուց հետէ, ինչպէս որ կերևի Յոբայ գրոց մէջ. ուր կերևի նաև թէ չարի սկզբան վրայ ալ Պարսից կարծեացն հակամէտ էին։ Լոգման անունով մէկն՝ զոր Դաւթի ժամանակակից կը համարին ոմանք՝ Եսոպոսի պէս առակներ գրած է։

Իմաստասիրութիւն փիւնիկեցւոց. — Անոնց անուանի իմաստասէրներն եղան

1 Տես 'ի Բազմավէպ 1856 ամին էջ 341, 366։

Ա 14374

Սանքոնիատոն որ Տրոյիոյ պատերազմէն հին է. և Ոքոս կամ Մոքոս՝ որ հիւլէից կամ անհատ նիւթոց առաջին վարդապետն եղաւ, Սորաբոնին բուսածին նայելով։ Գրոյ և նաւարկութեան գիւտն փիւնիկեցւոց կը տրուի, ինչպէս նաև բնական ատոմն նաւարկութեան առաջնորդ։ Աշխարհագրութեան կամ աշխարհիս ստեղծման վրայ Սանքոնիատոնի հատուած մի կայ Եւսեբիոսի մէջ զոր շատերն անհարազատ կը համարին։

Իմաստասիրութիւն Եգիպտացւոց. — Մոգերն շատ պատիւ ունէին նաև Եգիպտացւոց մէջ, որ և գիտութեանց հնութեամբն Քաղդէացւոց հետ կը մրցէին։ Անոնք հնարեցան երկրաչափութեան նախատարերքն, որովհետև ստիպեալ էին Նեղոսի ջրոց քաշուելէն ետև ամէն մարդու արտերուն չափն ու սահմանն գտնել և որոշել. իսկ իրենց արուեստից ու գործոց ճարտարութեանն կը վկայեն՝ ինչպէս հիմա մնացած բուրգերն և կոթողներն։ Աստղաբաշխութեան մէջ ալ շատ վարպետ էին, ինչպէս կերևնայ նոյն բուրգերուն գրքէն՝ որ ճիշդ աշխարհիս չորս կողմերն գիտելով կանգնուած են։ Կոթողներն ալ կերևի թէ արեգակնային ժամացոյցեր էին։ Դիոդորի և Դիոգինէս Լայերտացիի վկայութեանն նայելով՝ արևու և լուսնի խաւարման ճիշդ պատճառացն ալ տեղեակ էին, և կրնային գա-

նոնք գուշակել։ Ճիշդ աստղաբաշխական ապիւռակներ ալ չինած էին, որոնց մէջ կերևնար մոլորակաց շրջանն և երևոյթներն։ Այն պատճառաւ մոգութեան ու քաւդէութեան ալ եռևէ կընկնային։ — Դիցաբանութիւններին ալ Պարսից նման էր Ոսիրիան՝ Արամազդ էր, Տիւփոնն՝ Արհմն և Որոս՝ Միհր։ Հաւանաբար կերևի թէ Իսիսի խորհրդոց մէջ, զորս և Յոյնք ընկալան երևսնան խորհրդատոնք անուանելով, կը սորվեցնէին Աստուծոյ միութիւնն ու նախախնամութիւնն, հոգւոյ անմահութիւնն և հանդերձեալ կենաց մէջ բարեաց և չարեաց հատուցմունքն. բայց այս վարդապետութիւններս ռամիկն կը պահէին։ — Իրենց մէջ գիտութեանց առաջին խնամակալն եղաւ Աղոդի կամ Հերմէս անուանով մէկն, որուն յետ ժամանակաց յաջորդեց Սոփոս, նոյնպէս Հերմէս կամ Եռամեծ ըսուած, որուն անուանովն գրքեր ալ կան, բայց շատերն ստայոգ կը համարին։ — Եգիպտացւոց խնամութեան համբաւն այնչափ մեծ էր՝ որ Յունաց անուանի օրէնսդիրներն Լիկուրկոս և Սոլոն, և իմաստասիրութեան նախահարքն Թալէս, Պիւթագորաս և Պլատոն, և գրեթէ բոլոր իրենց գիտուններն ու բանաստեղծք, Եգիպտոս կերթային անոնց կրօնքն ու իմաստասիրութիւնն սորվելու համար. ուստից շատ բան բերին 'ի Յունաստան. շատերն ալ հետուէն գրավա-

նանց կաշակերտէին, որով կրնանք ըսել թէ Եգիպտացիք եղան Յունաց և անով բոլոր աշխարհի վարժապետներն։

Իմաստասիրութիւն Հնդկաց. — Հնդկաց ազգի իմաստասէրներն՝ իրենց մերիութեանն համար Վերկիմաստակ կըսուէին. որոնց գլուխ եղաւ Բուդդաս անունով մէկն, որ եւրն շատ ազանդներու բաժնուելան, որոնցմէ ազգիներն են բրահմանք, գերմանք կամ սամոնացիք։ — Ասանք գաշխարհս ծագումն իւր Աստուծոյ կը համարէին, մանաւանդ թէ աստուածութեան ծաւալումն կը սեպէին զանիկայ, որով Բաղդէացւոց վարդապետութեան կը մօտենային։ Կընդունէին նաև մարմնափոխութիւն կամ հոգէփոխութիւն, ինչպէս ինչուան այս օրս ալ շատերն կընդունին. որոնցմէ առաւ նաև Պիւթագորաս այս կարծիքս։ Իմաստութիւնն բանի անզգայութեան վրայ հաստատած էին, զոր և ընկալան ապա և ստոյիկեանք։ Ամէնէն հին գրքերնին Վեդաս քառածն է՝ որ բաւական ծանօթ է լեզուագիտաց։

Իմաստասիրութիւն Ճենաց. — Սինէացւոց կամ Ճենաց իմաստասիրութիւնն Հնդկաց շատ նման էր աշխարհիս սկզբանն և հոգւոյ անզգայութեանն ներառմամբ։ Իրենց ազգի իմաստասէրն և օրէնսդիրն Ֆոհի անունով մէկն եղած է, որուն գինի բազում ժամանակաց յաջորդեցին Կանֆուկիոս և Լաոցէս։ Իրենց անուանի գրքերն

են Հնդկակ Գինի բառածներն որ կը խօսին իրենց կրօնքին, բարոյականքի, քաղաքական օրինաց և պատմութեանն վերայ։ Այս ազգիս մէջ շատ հին ատաղաբաշխական գիտողութիւններ կը գտնուին. ու շատ գիտերու մէջ Եւրոպացիներէն առաջ են, ինչպէս տպագրութեան, վառօդի, բևեռացուցի և ուրիշ գտնուած գիտերու մէջ. արուեստք ու գիտութիւնք ալ շատ հին ատենէն մտած են մէջերնին. թէպէտ ուրիշ ազգաց հետ վերաբերութիւն չունենալնուն և գրերնուն շատութեան և դժուարութեանցն համար շատ ետ մնացած են։

Իմաստասիրութիւն այլոց ազգաց. — Եթովպացիք ալ Հնդկաց պէս մերկիմաստակներ ունէին. բայց ուրիշ ամէն կողմանէ Եգիպտացւոց հաւասար էին։

Պաբիլոնացւոց մէջ Ատլաս անունով մէկն ատանգաբաշխութեան մէջ շատ հըմուտ եղած կերևի, որով կառատպելն թէ երկինքն իր ուսոց վրայ կը կրէ։

Որմէն որ Թրակացւոց վայրենի ազգն քաղաքականութեան կրթեց, կարծէր թէ տիեզերք կրակով պիտի էրին լմնան և նոր աշխարհ պիտի ծնանի. ատաղերն մի մի աշխարհ կը համարէր, լուսինն ալ երկրիս նման լեռներով ծովերով և քաղաքներով զարդարուած։ Բայց այս կարծիքներս Որմէոսէն աւելի հին են ու ասիացիներէն և եգիպտացիներէն անցած է Յունաց մէջ։

Ակիթացւոց աստուածն էր Զամոլքսիս՝ որուն քով կը յուսային մահուընէ ետեւ երթալ ու երջանկանալ. ու այս էր իրենց իմաստասիրութիւնն։

Կեղտոտ կամ Կեղտացիք կըսուէին ոչ միայն Եւրոպայի հիւսիսային բնակիչներն, այլ Գերմանացիք, Գալլիացիք, Բրիտանացիք, Սպանիացիք, Լիւբիկեցիք, Պառնոնիացիք և այլն, ինչպէս նաև Իտալիոյ մէկ մասն։ Իրենց աստուածներն էին Տեւտաս, Էս, Տարանիս, Ոդին, Տուիստոն և Ման։ Իրենց Դրուիդք ըսուած քուրմերն իրենց իմաստասէրներն ու քաւդեայներն էին։ Կը հաւատային որ այս կեանքէս ետքն 'ի հանդերձեալն հաստատուն պիտի ըլլայ վարձուց և պատժոց։ Ոսիանու բանաստեղծութեանց մէջ մեռելոց հոգիներն շատ անգամ կերևին ամպերու վրայ պտըտելով։

ՅՈՒՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ադանդը յունական իմաստասիրութեան յառաջքան Պոկրատ.

Յունական իմաստասիրութիւնն ալ իր մանկութիւնն ունեցաւ և քաղաքական անցքերն ալ մեծ ազդեցութիւն ըրին իր վրայ, որով հասաւ իր վերջին պայծառութեանն Պլատոնի, Արիստոտելի, Ե-

պիկուրոսի և Զենոնի գրութիւններովն՝ որոնք երկայն ժամանակաց դարերու մէջէն անցնելով՝ զարմանալի յաջորդութեամբ մի շարունակեցին։ Այս սկզբնական շրջանս մեր թուականէն եօթն դար առաջ կը սկսի և ինչուան հինգերորդն կերթայ։ Նոյն առենուան իմաստասիրաց մեծ գրաղմունքն արարածոց ծագման խնդիրն է, գործածուած ոճն ալ ընդհանրապէս ենթագրութիւնն է. գրութիւններն ալ շատ բազմաթիւ են և զանազանեալ և մարդուս մտաց հետեւած ուղղութիւնն կը յայտնեն։ Իմաստասիրութեան ծաղկած տեղն գլխաւորապէս Յոնիան և Իտալիոյ հարաւային մասն է որ՝ Մեծ Յունաստան կը կոչուէր. և հինգ գլխաւոր աղանդոց կը վերածուի ա. յոնիական դպրոց. բ. իտալական կամ պիւթագորական դպրոց. գ. իլեական դպրոց. դ. հիւրկանեանց դպրոց. և ե. սկեպտիկեանց և իմաստակաց։

Յոնիական դպրոց. — Յոնիական դպրոցն ուրիշներէն կորոշուի՝ բնաբանական գիտութեան մասնաւոր ախորժակովն, բայց աւելի տիեզերաց տարբերական սկզբան հետազօտութեամբն։ Նիւթական երևոյթներն կրնան աճումն սեպուիլ՝ այնպիսի զօրութեան մի՝ որ յաջորդաբար զանազան ձևեր կառնու, թէ և այս փոփոխութեանց ժամանակ իր էութիւնն նոյն կը մնայ։ Նոյն երևոյթներն կրնան առաջ եկած սեպուիլ նաև շարժման արդասիրէն՝ որ կը

մտանցնէ ու կը հեռացնէ զմասունս նախ-
նական անդուանդին՝ յորում 'ի սկզբանէ
հետ խառնուած էին արարածոց նախա-
տարերքն։ Այս երկու նկատմամբ յոնիա-
կան դպրոցն ալ երկու աղանդի բաժնուե-
ցաւ զօրութենականաց և շարժաբանից։

Զօրութենականաց մէջ գլխաւոր խնդա-
ասէրք եղան.

Թալէս միլեսացի (600 Ն. Ք.) որ յԱ-
սիա Եգիպտոս Փիւնիկէ ու Կրետէ շատ
ճամբորդութիւններ ընելէն ետև՝ իր հայ-
բենիքն դարձաւ սորմածներն ուսուցանել-
լու. և այսպէս առաջին աղանդն հաստա-
տուն եղաւ՝ որ տեղւոյն անուամբն յոնիա-
կան կամ յունական ըսուեցաւ։ Ջուրն
ամէն բանի սկիզբն կը համարէր. և այս
կարծիքս ընդունելուն պատճառն այն էր
որ՝ կըսէ Արիստոտէլ, վասն զի գիտեր
էր՝ որ խոնաւութիւնն ամէն բանի անուն-
է, և նոյն իսկ ջերմութիւնն 'ի խոնաւու-
թենէ առաջ կուգայ և անանի. իսկ աս-
տուածութեան և հոգւոյ վրայ հարցիւ թէ
անորոշ կարծեաց հետք մի կը գտնենք՝
շարժիչ զօրութիւն մի համարելով հոգին,
որով և մարդիսի համար ևս կըսէր թէ հո-
գի մի ունի՝ որմէհետև գերկաթն կը շար-
ժէ. սակայն արարածոց գերագոյն պատ-
ճառ մի ըլլալն չուրացաւ։ Երկրաչափու-
թեան մէջ զանազան տեսութիւններ գը-
տաւ, լուսաւորաց խաւարմունքն գիտնց
ու գուշակեց. երկինքն հինգ գօտիներու

բաժնեց ու հասարակածն հաստատեց, և տարին երեքհարիւր վաթսունհինգ օրերու բաժնեց։

Անաքսիմէն միլետացի (557 Ն. Ք.) օդն բան զջուր նախընթաց համարեցաւ, որովհետև ամէն մարմիններէն աւելի նուրբ է, և նոյնն հոգւոյ ծանօթութեան ու գործունէութեան սկիզբ սեպեց. այս վարդապետութիւնս ընդունեցաւ նաև Դիոգինէս ապոլոնիացի։ Արեգակնային ժամացոյցն ալ Անաքսիմենէսի գիւտն է։

Հերակլիդէս եփեսացի (500) հեղինակ եղաւ այն գրութեան յորում վարդապետիւնք յոնիական դպրոցին ինչուան յետին ծայրն անցան. ինքն հուրն հանրական սկիզբն կը դնէր ամէն բանի, և անընդհատ կերպարանափոխութեամբ դարձեալ 'ի նոյն կը դառնան. ուստից առաջ կուգայ որ աշխարհիս մէջ կայուն բան մի չկայ, այլ ամենայն ինչ անցողական է, ինչպէս գետի մի ջրերն՝ որ ոչ բնաւ նոյն են երբ կրկին անդամ մտնելու ըլլաս։ Հոգին ևս հրոյ արտադրութիւն մի է, կամ շունչ մի և գոլորշի մի որ կանցնի. ծանօթութիւնք ալ հաստատ հիմ մի չունենալնուն փոփոխական և անստոյգ են, և մարդիկ կարծիք միայն կրնան ունենալ, և ոչ երբէք ճշմարիտ գիտութեան կրնան վերանալ։

Իսկ շարժարանից մէջ անուանի են.

Անաքսիմանդր միլետացի (610) որ գա-

մենայն ինչ անհուն է մի առաջ եկած կը սեպէր որ յամենայն տարերաց խառնուրդ մի էր, և չենք գիտէր թէ ինչպէս կը սահմանէր զանիկայ։ Արիստոտէլ այս անհուն զԱստուած կը հասկնար, իսկ Կիկերոն զանհնութիւն բնութեան։ Անաքսիմանդր հնարեց ժամացոյցն, գուն, արեւացուցակ աղաւն ու աշխարհագրական տախտակներն։

Անաքսագորաս Կլազոմենացի (500–428) Յունաստանի երեւելի իմաստասէրներէն մէկն է. Անաքսիմանդրի պէս յաւխանական և անհուն անդունդ մի կենթադրէր 'ի նմանատեր մասնիկանց յօրինեալ զոր ս և Ղմանամասունս անուանեց. այս մասնիկանց բաղկացութենէն առաջ կուգայ մարմնոց գոյութիւնն և ապականութիւնն։ Բայց արտաքոց բան երեւցաւ իրեն աշխարհիս վրայ երեւցած Համեմատութիւնն և ներդաշնակութիւնն բոլորովին գիպաց արգասիք և անդնդոց անկարգ շարժմանքէն առաջ եկած սեպել. ուստի ընդունեցաւ իմացականութիւն կամ հոգի մի առաջին հեղինակ կարգաց տիեզերաց և ունող մաւոր և բարոյական կատարելութեանց։ Այսպէսով ճամբայ բացաւ Սոկրատայ և Պլատոնի, և սակայն նախկին պատճառի հարկաւորութիւնն ինչպէս որ պէտք է լաւ չբացատրեց։

Յոնիական դպրոցին կը վերաբերի դարձեալ Եմբեդոկլէս ակրագանդացի (460–

444) որուն գրութիւնն շատ մասանց մէջ Պիւթագորասի գաղափարաց հետ նմանութիւններ ունի. կերևի թէ չորից տարրաց, այսինքն հողոյ, ջրոյ, օդոյ և հրոյ հնարողն ինքն է, որ երկայն ատեն իմաստասիրաց մէջ պահուեցաւ։ Այս չորս տարրերքս հողոյ մէջ ալ կան՝ առանց որոյ հողին չէր կրնար ճանաչել զտիեզերս, քանզի նմանն ևնթ ճանաչէ զնմանն։ Եմ բնզոկէս կը գնէր նաև երկու տեսակ զօրութեանց ներգործութիւն, մին՝ որ տարրերքն կը միացնէ և կարգի և գեղեցկութեան ապրիւրն է, որ կրսուի Սէր. իսկ միւսն՝ որ կը բաժնէ զանոնք և անկարգութեան և ապերջութեան ծնող՝ կրսուի Մարտ կամ Անիրաւութիւն։

Իտալիական դպրոց. — Իտալիական դպրոցն ալ յոնիականին պէս մասնաւոր յատկութիւն մի կրցուցնէ համազգոյից գիտութեան. բայց ասելի ջանքով կը մշակէ շաֆաբերութիւնն և ատողաբաշխութիւնն քան թէ բնաբանութիւնն։ Կրսուի թէ իր հիմնադիրն Պիւթագորաս ասմատցի (584 Ն. Ք.) ճամբորդութիւններ ընելով 'ի Քալդէասան և Յեգիպտոս Մեմֆիսի քրմաց հետ ուսանուեր է. և 'ի գարձին Իտալիոյ Կրոտոն քաղքին մէջ հաստատեց իր դպրոցն՝ որ շատ անուանի եղաւ. երկայն ատեն իր խորհրդածութեանց նիւթ եղան համարողութիւնն, երկրաչափութիւնն, երաժշտութիւնն և ատողաբաշ-

խութիւնն. և իր չափաբերական ծանօ-
թութիւններն խմաստասիրութեան յար-
մարցնելով՝ հաստատեց թէ և իրք ոչ միայն
թուոց հետ նմանութիւն ունին՝ այլ և թիւք
իրաց ձևն և ենթակայութիւնն են. այս
զարմանալի կարծեաց երկու գլխաւոր
պատճառ կուգայ Արիստոտէլ. ա. մէյնն
որ ներգաշնակութեան և կարգաց պատ-
ճառն թիւն է. բ. որ թիւք աւելի նմանու-
թիւն ունին իրաց հետ զոր օրինակ արդա-
րութեան հետ, քան թէ հուրն և ջուրն՝
զորս յանխականք տարր կը համարէին։
Պիւթագոր տան հիմնական թիւ կընդու-
նէր՝ որոնց մէջ կը բովանդակի բոլոր տիե-
զերաց գրութիւնն. ասկէց ենթադրեց
տան երկնային մարմիններ որ դաշնա-
կաւորութեամբ կը թաւալին իրենց կենդրո-
նին՝ այսինքն արեւուն վրայ՝ զոր ասուա-
ծոց բնակարան կը համարէր։ Ինչպէս ինքն
հոգին շարժուն թիւ մի կը սեպէր, որ 'ի
միութենէ ծագած ըլլալով՝ զարձեալ 'ի միու-
թիւն կը գիմէ իրրև առ գերագոյն վախ-
ճան։ — Պիւթագորասի վարդապետու-
թեանն լրումն էր հոգեփոխութիւնն, որ է
հոգւոյ մարմնոց 'ի մարմին անցնիլն. զորս
իր աշակերտներն աւելի բացատրեցին և
ծաւալեցին. որոնց մէջ գլխաւորներն են
Արքիտաս տարենտացի, Փիլոլայոս Կրո-
տոնացի, Եպիքարմոս Կոսացի։

Ելեայական դպրոց. — Ելէական դպրոցի
վարդապետութեան գրաշնն կամ ինքն

էակի միութիւն է, զոր միթին կերպով որ-
միցուց ազանդիս հիմնադիրն Քսենոփա-
նէս, զոր և յետոյ յայտնապէս ուսուցին
իր յաջորդներն Մելիսոս, Պարմենիդէս
և Զենոն։

Քսենոփանէս Կոլոփոնացի (617 Ն. Ք.)
այս սկիզբէս սկսելով թէ Յոյնք ոչ միայն
ինչ, կը հեռացնէր թէ բան մի շիրնար յա-
շէութենէ յէութիւն անցնիլ, որով կը հաս-
տատէր թէ իրապէս եղածներն յաւիտե-
նական և անփոփոխ են։ Իսկ փարձառա-
կանին գալով զգալի աշխարհիս երևոյթ-
ներն երկու տարբերաց ձևերուն կը բաղա-
տրէր որ են ջուր և հող։ Աստուածախո-
սութեան մէջ ալ առջիններէն մէկն եղաւ
որ Աստուծոյ ծանօթութիւնն գիցաբանա-
կան թանձր քօղերէն զերծեց, ու աստուա-
ծութեան միութիւնն և յաւիտենականու-
թիւնն բացատրեց։

Պարմենիդէս Եղէացի (519 Ն. Ք.) իր
Յաղագս Համազգայից քերթուածին մէջ
շատ ուժով կերպով յայտնեց Քսենոփա-
նեայ փարդապետութեան մասնաւորական
մասն. էակի գոյութիւնն սկսելով կը
հաստատէր թէ էակն սկիզբն ունեցած չէ և
վախճան ալ պիտի չունենայ, ուստի և ան-
փոփոխ է և անբաժանելի և անբաւ և լցու-
ցիչ բոլոր ընդարձակ վայրի. յետոյ կը հեռանի
թէ փոփոխումն և շարժումն պարզ երև-
ույթներ են որ զերեն զգայութիւնս, բայց
զոյս միայն սուտ կը հանեն։ Սակայն ար-

տառոց հակառութեամբ իր քերթուածոցն մէջ նիւթական երևութից մեկնութիւնն տալու համար՝ երկու ներհակ սկզբանց բազադրեալ ներգործութեանն կուտար՝ մին մերժական՝ որ է ցուրտն, և միւսն դրական՝ որ է ջերմութիւնն։

Զենոն Եղէացի աշակերտ Պարմենիդեայ, երևելի եղաւ շարժման գոյութեան դէմ բրած պատճառաբանութեամբն. սակայն պէտք չէ դիմն սկեպտիկեանց կամ իմաստակաց կարգն դնել, ինչպէս որ երբեմն համարուած էր. վասն զի թէ և զգայարանաց վկայութեան դէմ կը կռուէր, սակայն Պարմենիդեայ պէս մտաց վկայութիւնն կընդունէր, և փոխանակն իր վարպետին վարդապետութիւններն յաղթող հանել էր՝ զարս հիւլէական դպրոցն կը ջանար հերքելու։

Հիւլէական դպրոց. — Հիւլէական դպրոցին փոխանակն էր՝ փորձառութիւնն նորէն հաստատել զոր եղէականք մերժած էին, և զգալի աշխարհիս երևութից բացատրութիւնն տալ. իր հիմնադիրն Լևկիպպոս, իրաց երեք սկիզբ կընդունէր, հիւլեայք, դատարկութիւն և շարժումն՝ որ հիւլէից էական յատկութիւնն էր. հիւլէներն թուով անհուն էին, բայց իրենց մանրութեանն համար անտեսանելի. և իրենց զանազան տեսակ շաղկապմամբն առաջ եկած էին համագոյից ամէն նիւթերն՝ կարևոր օրինաց համեմատ. նոյն իսկ հոգին

կլորակ հիւլէից շաղկապումն է. ուստից յառաջ կուգան 'ի մարդս կեանքն ու շարժումն։

Դեմոկրիտոս աբդերացի (494 Ղ. Ք.) աշակերտ Լեկիպպոսի, իր վարպետին վարդապետութիւնն ամբողջացոյց երևելի ուսութեամբ մի զգայութեան և խորհրդոյ զոր կը համարէր թէ յիրաց յառաջ եկեալ պատկերներ են որ զգայութեան գործարանաց վրայ կը տպաւորուին։ Իսկ բարոյականին նայելով կը համարէր թէ մարդուս գերագոյն բարին յերջանկութեան հասանելն է՝ զոր խառնուածոց միակերպութեամբն կրնանք ունենալ։ Յամենայնէ մի ևս Լեկիպպոս Լեկիպպոսի վարդապետութիւնն ընդունելով՝ իր ըստ նազանցութեան հիմն ըրաւ զանիկայ։

Դպրոց իմաստակաց. — Գրեթէ երիտասարդաց միջոցի մէջ Յունաստանի այլազգի ներհակաց դրութիւններս պատճառ եղան ընտրողականութեան յառաջ երթալուն, որ յիրաւի երևցաւ այս շրջանիս վերջերն իմաստակաց դպրոցի ձևուքն։

Իմաստակներէն շատերն խօսելու արուեստին մէջ ճարտար և իմաստուն հռետորներ էին, բայց իմաստասիրական ճշմարիտ ոգւոյն անծանօթ, և ամէն տեսակ նախադասութիւն պաշտպանելու պատրաստ ըլլալով՝ շատ անգամ աւուն ճշմարտի հետ կը խառնէին խօսքի ճարտարմիտութեամբ։ Սակայն որչափ որ իրա-

սամբ անարգելի եղան՝ չենք կրնար ուրանալ որ մարդկային մաց մեծամեծ ծառայութիւններ ալ մատուցին, իրենցմէ առաջ եղած վարդապետութեանց անբաւ սխալներն ու հակասութիւններն յայտնելով. ուսումնական ամենաբարձր խրնդիրներն ալ առմկական կերպով բացատրեցին, և իմաստասիրական ուսմունքն ժողովրդեան ընտանեցուցին. վերջապէս մարքերն արթնցուցին կենցաղագիտութեան և բարոյականի ուշ դնելու՝ որոնց վրայ իրենց նախորդներն անհոգ եղած էին, և իրենց առաջնորդութեամբն Սոկրատայ դարն պատրաստեցին, որուն նորոգութիւնն աւելի հարկաւոր երևցաւ իրենց տուած օրինակաց և գործածած ոճին վառանգումն։

Հռչակաւոր իմաստակաց մէջ կը յիշուի Կորկիաս 'ի Լիոնդիոնէ (440 Ն. Ք.) որ ջանաց ցցունելու թէ գոյութիւն ըսած բանդ չկայ. և թէ գոյը ինչ՝ անկարելի էր ճանաչել զնա. և եթէ կարելի էր ճանաչել՝ անմարթ էր տալ այլոց զծանօթութիւն նորին 'ի ձեռն նշանակաց լեզուի։

Պրոտագորաս արդերացի՝ որուն կը ընծայուի այն առածն որ զգայութիւնն ամէն բանի չափն է, և հետևապէս կարծիք մի նոյնչափ ճշմարիտ է՝ որչափ ուրիշ մի, որովհետև զգայութիւնք յանհունս փոփոխին։

Դիագորաս մելոսացի անուանի եղաւ առ

հինն իր անաստուածութեամբն. Պղատ, Թրասիմաքոս, Եբիքուրոս. որ բարոյական գաղափարներն կենցաղագիտութեան հնարք կը համարէին։

Սոկրատ և յեղափոխութիւն իմաստասիրութեան՝ ի ձեռն նորա.

Կենսագրութիւն Սոկրատայ. — Սոկրատայ երիտասարդն Պղատոն և Քսենոփոն՝ իրենց վարպետին բարուցն և վարդապետութեան նկարագրութիւնն մեզ աւանդեցին։ Պղատոնի գրուածին մէջ աւելի իմաստասիրական ոյժ կերևի, սակայն շատ անգամ իր գաղափարներն անոր կարծեաց հետ կը խառնէ. իսկ Քսենոփոն թէպէտ ոչ այնչափ խորիմաստ՝ բայց աւելի պարզ ըլլալով՝ աւելի ճշմարտախօս առաջնորդ մի կրնայ ըլլալ, որուն աւելի պէտք է հետևիլ Սոկրատայ վրայ ճիշդ գաղափար մի ունենալու համար. որովհետև անոր վարքն ոճն և վարդապետութիւնն աւելի հաստատուն և անխառն կերպով նկարուած են։

Քսենոփոն գլխաւոր շարս գործ թողած է մեզ Սոկրատայ վրայ. ա. Խօսակցութիւնք արժանիք յիշատակաց կամ Յիշատակարանք Սոկրատայ՝ ի շարս գիրս բաժանեալ, յորս կը յիշուին Սոկրատայ խօսակցութիւնքն բարոյականի և կրօնից վերաբերեալ այլ և այլ նիւթոց վրայ։ բ. Պաշտպանութիւն Սո-

կրատայ, որ իր գատաւորաց առջև վարած գատին պատմութիւնն է։ գ. Յեսուսաբիւն Սոկրատայ, որ են Սոկրատայ առանին արքունութեան վրայ ըրած խօսակցութիւնքն։ դ. Խնչոյք։

Սոկրատայ յիշատակարանաց մէջ կը գտնուին իր վարուց և վարդապետութեանց ամէնէն պատուական մանրամասնութիւնքն. և որովհետև իր ժամանակի երևելի մարդկանց հետ խօսած է՝ ուստի և խօսակցութեան կերպով գրուած է. ան Քսենոփոնի յատուկ մաքրութեան կնիքն ունի՝ պարզ և անանձնութիւն. և պատմագիրն բոլորովին անյայտ կըլլայ՝ իր պատմական անձին մեծութեան առջևն՝ զոր կը նկարագրէ։

Սոկրատ ծնեալ յԱթենս (470 ամաց Ն. Ք.) Սոփրոնիսկոս անուանով արձանագործի և Փենարետ անուամբ գայնկի մի զաւակ էր, որ իր հօրն արուեստն թողով՝ գրականութեան և իմաստասիրութեան նուիրեցաւ. իր գիւղացիական ուղղամտութեամբն և հեղնութեան հակամէտ հանճարովն, բարոյականի անխախտ հաստատամտութեամբն և բարուց գժուարագիւտ անմեղկութեամբն նոյն առնին վարդապետութիւններն նորոգող իմաստակաց դէմ՝ ախոյան հանդիսացաւ. և ամենայն կերպով անոնց հետ պատերազմեցաւ, ոչ՝ վարժապետական աթոռոյ և որոշեալ օրերու և ժամերու մէջ, այլ ամէն տեղ և

միշտ, 'ի մարզարանի և 'ի հրապարակի, 'ի շքեղագոյութեան և 'ի բանակս զօրաց. ոչ եթէ գպրոցական գիտութեան արուեստին զարդերովն՝ որ շատ անգամ անարգասաւոր էին և անպտուղ, այլ իրեն աբուեստ ըրած էր իրեն մօտեցողներն առինքն քաշել, և համակրութեան սիրով անոնց սիրտն գաստիարակել[1]. անոնց հետ խօսակից և կենակից ըլլալով կը սորվեցընէր իր վարդապետութիւնն, որուն համար կըսէր թէ ընտանի ոգիէ մի սորված է, որ իր վարուց մէջ դեռ Սոկրատայ կը ըսուի։ Իր խիստ և իմաստուն պատուէրներն իր խստակրօն և անձնանուէր կենաց օրինակաւն կը հաստատէր։ Պոտիդէի մէջ Ալկիբիադեայ կեանքն ազատեց, Դելիոնի մէջ Քսենոփոնին, և Ամֆիպօլայ պատերազմին մէջ իր քաջութիւնն ցցուցուցիչ եղաւ։ Արքինուսեան կղզեաց յաղթող զօրապետներն պաշտպանեց, Ժողովրդեան սպառնալեաց հակառակ և միւս դատաւորաց խօսքին դէմ։ Սակայն որչափ որ անշահասէր ու առաքինի էր Սոկրատ, այսու ամենայնիւ չկրցաւ ազատիլ անոնց բարկութենէն ու նախանձէն՝ որոնց ոգիութիւնն խայտառակած էր, և ոչ ալ քրմաց կասկածանքէն՝ որ իր կարծեաց համարձակութենէն կը վախէին։ Անիտոս

1 Տես զգաստաբարոյութիւն Թէակէսի 'ի թարգմանութեան Պլատոնի 'ի Քուզինէ հա. Ե։

և Մելիտոս զինքն ամբաստանեցին՝ որ-
պէս թէ ազգին աստուածներն չճանչնար
ու պատանիներն կեղծանէ. որով դատա-
պարտեցին զինքն մոլեխինդ խմելու (400
ամօր Ն. Ք.) բայց արդէն իր ըրած նո-
րոգութիւնն հաստատուած էր՝ որուն նուի-
րեց նաև իր կեանքն։

Այս նորոգութիւնս շատ արդիւնաւոր
եղաւ, և պատմութեանց մէջ արժանաւոր
կերպով կը յիշատակուի, որովհետև գի-
տութեանց վախճանին, առաքինին և ո-
ճին շատ օգուտ եղաւ։

Ըստ պիթագորեանց և յոնիականաց՝
գիտութեան վախճանն էր մեր հոգւոյն
հետաքրքրութեան քաղցն լնուլ. իսկ ըստ
իմաստակաց էր ճոխութեանց իշխանու-
թեանց և փառաց հասանիլ. իսկ ըստ Սո-
կրատայ՝ բարոյական կատարելութիւնն և
առաքինութեանց մէջ յառաջադիմելն էր
գիտութեանց միակ վախճանն։

Սոկրատէ առաջ իմաստասիրութիւնն
տիեզերաց ծագման և օրինաց խնդրոցն
մէջ յանդուգն և ունայն տեսութիւններ
ունէր. իսկ անոր հետ՝ Կիկերոնի ըսածին
պէս, կարծես թէ երկնքէն յերկիրս իջաւ,
և ինչուան ընտանեկան կենաց մէջ թա-
փանցեց։ Ինքն մարդուս միտքն իրաց
սկզբան ունայն խնդիրներէն անջատեց,
և մարդկային խորհրդոց գիտութեանն
միայ դարձուց. և իրեն նշանագիրն այս
առածն էր Ծանիր զքեզ։

Նախկին խմաստասիրաց ոճն ենթադրութիւնն էր. իսկ Սոկրատի ոճն էր ճիշդ բաժանումներ ընել, բառերն և իրերն ազէկ մի սահմանել, և ընդհանուր հետևանք մի հանելէն առաջ շատ օրինակներ հաւաքել, ամէն բանի ազէկ մտադրութիւն և զգուշութիւն ընել, վերջապէս ինքն իր անձին ալ խորհուրդ հարցնել, և գիտնալ թէ ինչ կը խորհի և կը գրուցէ։

Պլատոն խմաստուն ոճ մի շատ հարկաւոր ճշմարտութեանց կրնար առաջնորդել Սոկրատի պէս խմաստասէր մի. բայց իր խորհրդածութեանց հետևանքն կարգի մի վրայ առած և գրութիւն մի ձևացուցած չէ. անոր համար մինակ առանձինն կարծիքներն մեզ հասած են, որոնց գլխաւորներն ասոնք են. ա. Հոգէբանութեան մէջ հոգւոյ և մարմնոյ զանազանութիւնն, և հոգւոյ Աստուծոյ հետ ունեցած հաղորդակցութիւնն։ բ. Աստուածաբանութեան մէջ Աստուծոյ գոյութեան ապացոյցն 'ի կարգաց և 'ի գաղնակաւորութենէ տիեզերաց. և հաւատք նախախնամութեանն Աստուծոյ։ գ. Բարոյաբանութեան մէջ գիտութեան և առաքինութեան, բարոյական կատարելութեան և երջանկութեան նոյնութիւնն։ Բայց Սոկրատ թէ և գրութիւններ առանգած չէ՝ ապայն մտաց նոր և արդասաւոր ճամբայներ բացած է, և իր առած շարժումն և յառաջադիմութիւնն իր մեռնելէն շատ դարեր ետքն ալ տևած են։

Գլխաւոր գպրոցք յետ Սոկրատայ՝ մինչև ցդպրոցն ալեքսանդրեան.

Սոկրատայ վարդապետութիւնն յունական իմաստասիրութեան նոր շրջան մի կը բանայ որուն մէջ երևցած գործոց մեծութեամբն և հաստատութեամբն ամէնէն գերազանցն կը սեպուի. բազմաթիւ դպրոցներ կը հաստատուին՝ որ այս մեծ մարդուն թէ ոչ վարդապետութիւնն՝ գոնէ ոգին կը ժառանգեն, և անոր պէս գլխաւորապէս մարդկային բնութեան քննութեանն կը պարապին. որոնց գլխաւորներն ասոնք են ա. Մեգարեան դպրոց. բ. Կիւնիկեան դպրոց. գ. Կիւրենեան դպրոց. դ. Ակադեմեան ազանդ. ե. Լիկէոն կամ Ճեմարան. զ. Սկեպտիկանք. է. Եպիկուրեան ազանդ. ը. Ստոյիկեան ազանդ. թ. Միջին և Նոր Ակադեմիայ։ Եթէ ասոնց վրայ աւելցնենք նաև քրիստոնէութենէ եկած հաստատուած դպրոցներն, ինչպէս Պլատոնեանց կրոնական կամ նորոց, որ նախկին իմաստասիրութեան վերջի դարն է, Սոկրատի շարժմունքէն առաջ եկած ամէն գրութիւններն ալ համրած կըլլանք. որոնց վրայ համառօտ մի անցնինք։

Մեգարեան դպրոց. — Մեգարեան դպրոցն հին ատեն անուանի էր իր հակա-

ճառութեան հոգեւոր՝ որով և Վիճաբան բառեցաւ. իր հաստատողն եղաւ Եւկլիդէս մեգարացի՝ որ իր մանկութենէն ելլալեան գպրոցի սկզբամբք լցուած ըլլալով ուզեց զանոնք Սոկրատի ոճին հետ միացընել։ Իրեն յաջորդաց մէջ երևելի եղան Եւբուլիդէս, Դիոդորոս, Ստիլպոն որ իմաստակութեան հնարողք եղան և երևելիք 'ի հնումն։

Կիւնիկեան գպրոց. — Այս ազանդն հաստատողն եղև Անտիսթենէս և շարունակողն Դիոգինէս սինոպեցի, որոնք կը հաստատէին թէ աշխարհիս մէջ բարին մի միայն է որ է առաքինութիւնն, նոյնպէս և մի է չարն՝ որ է ախտն. և ասոնցմէ զատ ամէն բան անտարբեր ըլլալով մեր ըղձից և ատելութեանն անարժան են, առողջութիւնն ինչպէս հիւանդութիւնն, աղքատութիւն ինչպէս ճոխութիւնն։ Կիւնիկեանք իրենց շափազանց սկզբամբն ընկերական պատշաճքն կարհամարհէին, և ինչուան անմիտ կոպտութեան կը հասնէին. որով և շնականք ալ բառեցան։

Կիւրենեան գպրոց. — Այս գպրոցն հաստատեց Արիստիպպոս Կիւրենացի՝ որ կիւնիկեանց պէս բարոյական ուսման եռանդ եղաւ՝ բայց բոլորովին ներհակ ընթացքով. չէր ընդուներ թէ իմաստութիւնն բան ինքեան բարիք մի ըլլայ, և մարդուս գերագոյն բարի և վախճան կը համարէր հեշտութիւններն, և անոնց մէջ

ալ ամէնէն աւելի մարմնականներն, իսկ իմաստութիւն կը սեպէր կեանքն վայելելու արուեստն։ — Այս ծայրայեղ վարդապետութիւններս զորս անշուշտ կը մերժէր Սոկրատ, սկիզբ մի էին անոր հոգւոյն հրաշալի բարգաւաճանաց Պլատոնի և Արիստոտելի դպրոցաց ձեռքովն որ Ակադիմեայ և Ճեմարան բուսեցան։

Ակադիմեայ. — Պլատոն ծնեալ յԱթէնս (430 ամօր Ն. Բ.) առջի բերան մարզարանի կրթութեանց տուաւ ինքզինքն. յետոյ ութ տարի Սոկրատի ուսնկնդիր եղաւ, և նոքն յԻտալիա, յԵգիպտոս և 'ի Սիկիլիա ճանապարհորդեց, և Աթէնքի մէջ Եկադիմոս անուանով մէկուն պարտիզաց մէջ իր դպրոցն հաստատելով ութսունեւերկու տարուան մեռաւ։

Արիստոտել Պլատոնի իմաստասիրութեան իրեք նախորդք կը համրէ. Սոկրատ, Հերակլիտէս և Պիւթագորաս. Պլատոն Սոկրատէն տուաւ այս սկիզբս թէ գիտութեան առարկայն ընդհանուրն է. իսկ Հերակլիտէսի հետ կը հաստատէր թէ զգալի իրք միշտ 'ի շարժման ըլլալով գիտութեան առարկայ չեն կրնար ըլլալ. Պիւթագորասի հետ ալ նիւթական էակաց աշխարհէն զատ՝ իմացական աշխարհ մի ալ կը նկատուէր. Ոմանք ասէս և զաշխարհ զաղափարաց՝ Իրական դպրոցի թուոց նման։ Ըստ Պլատոնի հոգին իր մէկ մասնաւոր կարողութեամբն՝ որ է բանն, կը ճանչնայ

զգաղափարս՝ զոր նախընթաց կենաց մի մէջ խորհեր է՝ արդի գոյութենէն յառաջ. և թէ գաղափարք յաւիտենական օրինակներ են և Աստուած անոնց համեմատ ստեղծած է զամենայն ինչ. և թէ առանք ամէնքն մէկ գերագոյն գաղափարի մի հետ կապուած են՝ որ է գաղափար բարւոյ զեռնղեալ ըստ Պլատոնի 'ի տահմանս մտաւորական աշխարհի, և յորում դիւրին է ճանաչել զնոյն ինքն զաստուածութիւն։

Գաղափարաց տեսութենէն զատ՝ պլատոնական իմաստասիրութիւնն շատ ստեղծագիտական տեսութիւններ ունի մարդկային հոգւոյ վերաբերեալ հարկաւոր խնդրոց մէջ։ Հոգէխօսութեան մասին Պլատոն կը համարի զոգին իբրև շարժող զօրութիւն մի, և երեք գլխաւոր կարողութիւններ կընծայէ անոր, զարժունէութիւն, զգացողութիւն և բան. կընդունի անոր պարզութիւնն և անմահութիւնն, և զանիկայ կանոնաւոր ապացոյցերով հաստատողներուն առջինն եղած է։ Բարոյական մասին՝ առաքինութեան սկիզբն Աստուծոյ հետ նմանակցութեան վրայ կը հաստատէ՝ զոր և գերագոյն բարի կը համարի։ Ամենապէս քաղաքական ընկերութեան ահմանադրութեանց քանի մի կէտերն ալ աւելի լուսաւորեց, բայց միութիւնն կարի հարկաւոր ճանչնալով պետութեան՝ ծայրայեղ կարծեաց մէջ կիյ-

նայ, և վասանգաւոր ցնորք մի կընդունի, զկանայս զորդիս և զինչս հաստատակաց համարելով։ Իր իմաստասիրութեան պըտակ կը սեպուի մեռեալ հոգւոց դատաստանին վարդապետութիւնն։

Պլատոն շատ գրուածներ ունէր տրամախօսութեան կերպով շինած, որոնց գլխաւորներն են Փեդոնն, Կրիտիասն, Հասարակապետութիւնն, Տիմէոսն և Օրենք։ Իր վարդապետութեանց մէջ ցնորական բաներ ալ կան, բայց միշտ մարդկային հանճարոյ գերազոյն ծննդոց կարգն պիտի սեպուին՝ առաջ լուծմունքներուն ընդարձակութեամբն պայծառութեամբն և վեհութեամբն, և բարոյն ու գեղեցկին սիրոմբ, զոր մարդուս սրտին մէջ կը շնչէ ու կը վառէ։

Լիկեոն. — Արիստոտէլ ծնեալ 'ի Ստագիրա յամի 384. տասնուվեց տարուան էր երբ Աթէնք եկաւ, և քսան տարի Պլատոնի աշակերտութիւն ընելէն ետև՝ 343ին Փիլիպպոս մակեդոնացւոյ թագաւորէն իր որդւոյն Ալեքսանդրին դաստիարակ ընտրուեցաւ. իսկ 334ին Լիկէոնի դպրոցն գտրոյ մի հաստատեց՝ որուն համար ճեմարան կամ ճեմական ալ բսուեցաւ, և մեռաւ 322ին։ Իրեն շատ գրուածներուն մէջ երևելիներն են. ա. բանախօսութեան կամ տրամաբանութեան վերաբերեալ վեց ճառք, այսինքն Կատեգորիքք, Ճառ յաղագս մեկնաբանութեան, Առաջին և

Էրկրորդ վերջաձայնքը, Յարգս տեղեաց, Եղծք խնամատարականք. որք բոլորն 'ի միասին կազմեն՝ Գործարանք. բ. Բնազանցութիւն մի 'ի չորեքտասան գիրս բաժանեալ. գ. Շատ մի գրուածներ բնական իմաստասիրութեան ամէն ճիւղերուն վրայ, բայց յայլոց և բնագրամութիւն անուանոց. դ. Փիլիսոփայութիւն մի, ճարտասանութիւն մի և Գեղեցկագիտութիւն և բարոյական նիւթոց վրայ ճառեր։

Արիստոտէլ թէպէտ երկար ատեն կենդանի գրութիւն և վերաբերութիւն ունեցաւ Պլատոնի հետ՝ սակայն բոլորովին իր վարդեսին վարդապետութեանցն չհետևեցաւ. գլխաւորապէս գաղափարաց տեսութիւնն ծանր առարկութեանց նիւթ կը համարէր, իբրև առանց ապացուցի գրութիւն մի, որով բան մի չէր կրնար բացատրուիլ և արտաքոց հետևանաց տանող. ուստի անոր տեղն նոր վարդապետութիւն մի ուզեց հաստատել արտաքսութեան բնազանցութեան և բարոյականի մէջ աւելի ընդարձակ և աւելի ստոյգ։

Իր արտաքսութեան մէջ առաջ կը սկսի մտաց տարերքն լուծել՝ զորս տասնի կը վերածէ ատոյգութիւն կոչելով՝ որոնց առաջինն է ենթակայն։ Այս տարերքն իրարու հետ միանալով՝ գատողութիւններ յառաջ կը բերեն՝ զորս կը բացատրէ նախադասութիւն. գատողութիւնք ալ իրարու հետ միանալով՝ կը ձևանան պատճա-

ռաբանութիւնք, որոնց ճիշդ բացատրութիւնքն շարաբանութեամբ կըլլայ, և ապացուցիչ ծագումն է։ Արիստոտել զարմանալի նրբամտութեամբ շարաբանութեան սկիզբն, հիմնական օրէնքն, կերպերն և ձևերն հաստատեց. և յետագայ դարեր քիչ բան կրցան աւելցնել իր վարդապետութեան այս մասին վրայ, որ նախնի իմաստասիրութեան ամենամեծ գիւտն կը համարուի։

Բնագիտութեան մէջ շատս սկզբունք կամ պատճառ կը համրէ. նիւթ կամ պատճառ նիւթական, ձև կամ պատճառ ձևական, փոխճան պատճառ փոխճանական և պատճառ արտադրիչ։ Ցիրաւի ամէն առարկայ նիւթ մի ունի, կամ որ նոյն է՝ անհատական գոյացութիւն մի՝ որոշեալ հանգամանաց. դարձեալ ունի փոխճան մի և արտադրիչ մի. այս անուութիւնս կը յարմարցընէ Արիստոտել տիեզերաց ամէն էակաց վրայ, նախ նիւթականաց, յետոյ մարդուս և նոքն Աստուծոյ։ Այսպէս 'ի մարդն կը զանազանէր զմարմին, և մարմնէն վեր կենդանացուցիչ սկիզբ մի որ է հոգի, որ և կուտայ մարմնոյն իր ձևն, կազմութիւնն և պահպանութիւնն. և ատոնք կարգութիւններէն վեր ունի նաև զիմացականութիւն և դրանականութիւն։ — Աստուածախօսութեան մէջ Աստուծոյ գոյութիւնն կը հաստատէր 'ի շարժմանէ, և նախկին պատճառին էական ատորոգելի կը համա-

ըէր զանշարժութիւնն, գյուխանենակա-
նութիւնն, զմիութիւնն և անոր բնու-
թիւնն կը հանարէր մտածութիւնն կամ
անձնագիտութիւնն, ուսկից առաջ եկած
է այն հռչակաւոր առածն է թէ «Մտա-
ծութիւնն է մտածութիւն մտածութեան».
բայց Արիստոտէլ մեծագէս կը սխալի ա-
ստուածային նախախնամութիւնն չճանչնա-
լով՝ զոր այնչափ ազէկ հաստատէր էր
Պլատոն։ Իր վարդապետութեան մէջ Ա-
ստուած ոչ այնչափ տիեզերաց արարչական
պատճառն է՝ որչափ վախճանն յոր գի-
մեն ամենայն գոյակք. որով թէպէտ բո-
լորովին չեզծաներ՝ սակայն շատ կայլայլէ
անոր բարութիւնն, արդարութիւնն և ա-
մենայն բարոյական առորդելիքն։

Ղմանապէս Բարոյականի և կենցաղա-
գիտութեան մէջ պրատոնեանցմէ տար-
բեր կարծիքներ կընդունի. օգտի ծանօ-
թութեանն ալ՝ արդարոյ ծանօթութեան
չափ յարգ կուտայ, թէ և զանոնք մէկմէ-
կէ կը զանազանէ, և գերագոյն բարին
շահու վրայ չհաստատէր, ինչպէս կընէր
Արիստիպպոս։ Ընդհանրապէս այս կոդ-
մանէ կը մեղադրուի որ պրատոնեան զա-
զափարականութիւնն շատ մեծաւակար սե-
պելով՝ գնեոզութեան ալ չափազանց յարգ
կուտայ։ Նէ սակայն իր խորին տեսութիւն-
ներովն և իր գրութեան քանի մի մասանց
զարմանալի ճշդութեամբն՝ իշխան իմաս-
տասիրաց ըսուելու արժանի եղած է։

Պլատոնի և Արիստոտելի մեռնելէն ետև քիչ ատենէն իրենց Ակադեմիոյ և Լիկէոնի մէջ հաստատած դպրոցներն սկսան ընկնալ. մէկ կողմանէ Սպեսիպպոս Պլատոնի յաջորդն ու քեռորդին, և Քսենոկրատէս բաղկեդոնացին գաղափարաց տեսութիւնն այլայլեցին, և անզգալի կերպով ինչուան պիւթագորականաց սահմանն ընկրկեցան. միւս կողմանէ ալ Արիստոտելի յաջորդներն՝ որոնց մէջ ամէնէն արժանաւոր Թէոփրաստն էր, ճեմարանաց վարդապետութիւնն շոփռպանցութեան մէջ ձգելով՝ կամաց կամաց նիւթապաշտութեան և անաստուածութեան տարին. ատենցմէ են Եւդեմոս Հռոդացի, Դիկէարքոս մեսենացի, Արիստոքսենէս տարենտացի և Սարատոն քամպանացի։

Սկեպտականք. — Յունաստանի այս երկու անուանի դպրոցաց անկումն՝ Պիւռոնի երկրացւոյ սկեպտականութեանն շահաւոր եղաւ, որ Քրիստոսէ առաջ չորրորդ դարուն վերջերն սկսաւ իր վարդապետութիւնն տարածել որչափ որ կարելի էր, որ և այլևայլ անուններ ունեցաւ պիւռոնական, յերկուական, սկեպտական, որ է զննական, անհաստական և այլն, որովհետև ամէն բանի վրայ կը տարակուսէին և անկարելի կը սեպէին իր մի առաջադրեալ բարոյականն։ Պիւռոն զլիաւորապէս ատան կը համարէր այս երկմտութեանն պատճառներն՝ որոնք յառաջ կը բերէր հո-

գեղէն էակաց զգացութեանց զանազանութիւնէն, և գաղտարակութեան, սոփերութեանց և օրինաց ազգեցութիւնէն՝ որոնք մարդուս գաղտագրութեանց վրայ ազդեցութիւն կունենան։ Վերջապէս բոլորն հաս կը բերէր՝ թէ նախադասութիւն մի չկայ որ ուրիշ համարգոր ճշմարտանման նախադասութեամբ մի չմերժուի. ուստի և իմաստութիւնն՝ այդին և ոչին մէջ տեղն մնալն է, առանց այս կամ այն կողմն հակելու, զոր զուգակշռութիւն հոգւոյ կը կոչէին և այս առածով կը բացատրէին «Ոչ այս ոչ այն, ոչ մին քան զմիւսն»։ Պիւռոնի աշակերտացան Տիմոն աթենացի անուանի մարդասէացն, Էնէսիդեմ, Էկատէոս արգենտացի, Ղաւսիփանէս տէացի. շատ ժամանակէ ետև Պտղոմէոս կիւրենացի որ շատ աշակերտներ ունեցաւ, որոնց մէջ անուանի եղաւ Սեքստոս Ներքսամտական բառուածն, Անտոնինոս Պիոսի ժամանակ, որուան գիրք գրեց ցուցնելու համարեմ անկարելի է գիտութիւնատանալն։

Էպիկուրեանք. — Էպիկուրոսի ձեռքով քիչ ատենէն նոր վարդապետութիւն մի եկաւ՝ որ Լիկէոնի և Ակադեմիոյ հանրաւոյն ու ազդեցութեանն ժառանգաւոր եղաւ. ինքն ծնած էր Ա. թէնքի մօտ Գարգեսիոն գիւղն (յամի 337 Ն. Ք.) և իր աղանդն սկսաւ ուսուցանել յ305ին, և շատ գրքեր գրելով և շատ աշակերտներ սատնալով՝ մեռաւ 270ին։ Իմաստասիրութիւնն

երեք մասն կը բաժնէր 'ի տրամաբանութիւն կամ կանոնական, 'ի բնաբանութիւն և 'ի բարոյական։ Տրամաբանութեան կամ բանախօսութեան մէջ մարդկային ծանօթութեանց սկիզբն և ազբիւր կը համարէր զգայութիւնն. բայց զգայարանաց առած ծանօթութիւններէն վեր հանրական սկզբունքներ կընդունէր՝ զորս անոնց ցոլացումն և զարգացումն կը համարէր, որով կրնանք փորձառութենէն առաջ իր մի ըմբռնել՝ զոր և Նախագիտութիւն կը կոչէր։ — Բնաբանութեան մէջ Եպիկուրոս Լեկիպպոսի և Դեմոկրիտոսի հիւլէից վարդապետութիւնն նորոգեց, բայց այնպիսի ենթադրութեամբ որով մարդուս ազատութիւնն և պատասխանատուութիւնն կրնար բացատրել. Դեմոկրիտոս հիւլէից ուղղագիծ շարժում մի կուտար. իսկ Եպիկուրոս անոնց շարժումն առ 'ի շեղ և կորագիծ համարեցաւ՝ ըստ որոյ ուղիղ գծէն խոտորելով։ Ըստ նորա, հոգին ևս հիւլէից բաղկացութիւն մի է, և հեռևապէս մարմնոց եղծմամբն կաշնչանայ։ Աստուածոց գոյութիւնն կընդունէր, սակայն նախախնամութիւնն կուրանար։ — Բարոյականի մէջ զնրագոյն բարին յերջանկութեան կը հաստատէր. բայց զերջանկութիւնն ոչ 'ի հնչեղութիւնս զգալիս՝ այլ 'ի վայելս սրտի և մտաց կը դնէր։ Ասով կը հեռանար 'ի Կիրենեան վարդապետութենէ, թէ և անոնց սկիզբն կընդունէր։

Եպիկուրոսի վարդապետութիւնն իր պարզութեամբն ընդունելի եղաւ հասարակաց, բայց ճշդութիւն և հաստատութիւն չունի ոչ 'ի տրամաբանութեան, ոչ 'ի բարոյականին, ոչ 'ի բնաբանականին, ու և առաւել աստուածախօսութեան մէջ։ Մարդկային բնութեան բարձրագոյն գաղափարաց և ազնուական զգացմանց անծանօթ է, որով և ցաւալի ազդեցութիւն մի ըրած է մարդկանց մտաց և բարուց վրայ։ Իրեն հետևողներն խիստ շատ էին ամեն ժամանակ, և Հռովմայ մէջ իր սկզբունքն ծաւալող եղաւ հռչակաւոր քերթողն Լուկրետիոս իր Ցաղագս բնութեան էից բանաստեղծութեամբն։

Ստոյիկեանք. — Ստոյիկեան աղանդն հաստատեալ 'ի Զենոնէ կիտացւոյ՝ որ Կիպրոսի մայրաքաղաքն էր, եպիկուրեան աղանդին դէմ ընդդէմ հակառակն է իր բարոյականին կնքումն, որ այնչափ կը բարձրացնէ զՀոգին՝ որչափ որ նուաստացուցեր էին զնա սկզբունք գարգեսացւոյ իմաստասէրին։ Զենոն (ծնեալ էր 'ի վերջ կոյս չորրորդ դարուն Ն. Ք.) որ և շատ վարպետներու աշակերտեցաւ որ են Կրատէս կիւնիկեան, Ստիլպոն և Դիոդորոս մեգարացի, Քսենոկրատէս և Պոլեմոն, (յամի 300 Ն. Ք.) նոր դպրոց մի հաստատեց Աթէնք դահլեի կամ սրահի մի մէջ, որով իր աղանդն ալ ստոյիկեան կամ սրահական ըսուեցաւ. և դրեթէ յիսունեւութ

տարի տրվեցնելէն ետև՝ շատ ծերացած մեռաւ։

Զենոն Եպիկուրոսի պէս երեք մասն կը բաժնէր իմաստասիրութիւնն, տրամաբանութիւն. բարոյական և բնաբանութիւն։ Տրամաբանութեան մէջ մարդկային ծանօթութեանց սկիզբն կը դնէր զգացողութիւնն, բայց հանրական գաղափարներն զգացողութենէ, և բանն 'ի զգայարանաց կը զանազանէր։ Ըստ իրեն ամենայն ճշմարիտ ըմբռնումն երեք գլխաւոր կնիք ունենալու է. այսինքն հարկ է որ ա. այն ըմբռնումն յառաջ գայ յիրական առարկայէ. բ. նոյն առարկային համաձայն ըլլայ. և գ. ուրիշ առարկայէ մի յառաջ չկարենայ գալ։ Իմաստուն մարդն պէտք է որ ճշմարիտ ըմբռնմանց համեմատ գատէ, և կարծեաց անսուտութենէ խորշի։ — Բնաբանութեան մէջ Զենոն երկու սկզբունք կընդունէր, նիւթ՝ որ է սկիզբն անշարժ, և Աստուած՝ սկիզբն գործող և կենդանացուցիչ, տնտակ իմն հոգի տիեզերական որոյ մշտնջենաւոր գործունէութիւնն ստեղծու պահէ և պահպանէ զկարգ աշխարհի։ — Զենոնի բարոյականին ընդհանուր առածն էր. Կեանց համաձայն բնութեան։ Այսպիսի կանոնաւոր կեանք մի՝ առաքինութեան էական պայման մի է, մանաւանդ թէ ինքն իսկ առաքինութիւն է, որ և գերագոյն և միակ բարին է մարդոյ։ Այսմ ատոյիկեանք

բանի տեղ չէին դներ կենաց ամէն հաճոյքն և բարեմասնութիւնքն առանց կիւնիկեանց պէս այս բանիս շափն անցնելու։ Ղեմանապէս շարեաց կարգն և ամբարշտութիւն կը սեպէին այն ամէն գործքերն որ յօրինաց և 'ի պարտուց կը հեռանան։ Այս շափազանց սկզբունքներս և ուրիշ մոլորութիւնք՝ պատճառ եղան 'ի վաղուց ստոյիկեանց անուն ստանալու. սակայն հնթանաութեան ժամանակ բարոյականին ուժն շատ գարեր անով պահուեցաւ, և սխալից և ապականութեանց յորձանացն դէմ ամբարտակ մի եղաւ։

Զենոնի աշակերտաց մէջ երևելի են Կղէանդէս, որուն մէկ երգն մնացած է 'ի պատիւ Արամազդայ. Քրիսիպպոս որ Սիւն դանձի ըստեղծաւ, Պենատիոս Հռոդացի, Պոսիդոնիոս և այլն։ Ստոյիկեան էր գարդեալ Եպիկտետոս՝ որուն մէկ գիրքն ալ ունինք՝ իր Փլաբիոս Արրիանոս աշակերտին ձեռաքն գրուած՝ որ անոր վարդապետութիւններն հաւաքեց։

Միգին եւ Նոր Ակադիմեայ. — Ստոյիկեան ազանդն թէպէտ շատ վարդապետութիւններ փոխ առած 'ի Պլատոնէ և յԱրիստոտելէ, և Յունաց ուրիշ հին յիմաստասիրութեանց, շատ անհիմն վէճեր ալ յարուցած էր անոնց դէմ։ Ասոնի հարկ էր որ շատ կամ ուշ անոնց պաշտպաններ ելլէին՝ որ Զենոնի և անոր աշակերտաց դէմն հանէին անոնց բրած առարկու-

թիւններն։ Եւ որովհետև մասնաւոր կեր-
պով պլատոնեանց դէմ էր վէճն՝ ուստի
ստոյիկեանց վարդապետութեան դէմ ե-
զած գրգռութիւնն ալ պլատոնեանցմէ
սկսաւ։ — Այրեսիպպոս ծնեալ 'ի Պրիտա-
նէ յԵւրոպիս. (գրեթէ 316 տարի Ն. Փ.) նախ
զինքն ճարտարիտութեան տուաւ, և յե-
տոյ զայն թողլով իմաստասիրական ուս-
մանց ձեռք զարկաւ։ Իր վարպետներուն
մէջ կը յիշուին Թէոփրաստ, Կրանտոր,
Պոլեմոն, Դիոգորոս մեգարացի և Փիւռոն.
բայց ամէնէն աւելի Պլատոնի վարդապե-
տութեանն հետևեցաւ՝ զոր և կը պաշտ-
պանէր ընդդէմ Զենոնի. և անոր ըմբռ-
նողութեան վրայ ըրած տեսութիւնն քն-
նադատելով՝ ցոյց թէ ստոյիկեանց ա-
ռաջարկած կանոններով՝ որչափ դժուար
էր ճշմարիտն 'ի սոյն որոշել։ Այս հակա-
ճառութեանս վերջն այն եղաւ որ իմաս-
տութիւն կը համարէր դատողութիւնն ա-
կամեալ թողուլ. և որովհետև այս վի-
ճակս մարդկային բնութեան հակառակ է՝
հաւանեցաւ ասելու թէ ամէն գործ ձշմար-
տանմանութեամբ գործելու է։ Այրեսիպ-
պոս հաստատած դպրոցն Միջին ակադի-
մեայ բուռեցաւ. իսկ անոր շարունակու-
թիւնն Նոր ակադիմեայ՝ որուն գլուխն ե-
զաւ Կարնէադէս Կիւրենացի (ծնեալ 217
ամօք Ն. Փ.) և շատ անուանի եղաւ Քրիս-
իպպոսի դէմ ըրած զօրաւոր հակաճա-
ռութեամբն. իրեն կը համարուի գարձեալ

ըմբռնողութեան վրայ նորանոր գիւտեր, և հաւանականութեան վրայ նրբին փաստեր։

Կարնէադէսէն ետև՝ նոր Ակադեմիայն կամաց կամաց ընկաւ իր յաջորդաց ժամանակ՝ որ են Կլիտոմաք Կարդագինեցի, Փիլոն Լարիսացի և Անտիոքոս ասկալոնացի. այս վերջինս իր դպրոցին սկզբանցն գէմ պատերազմեցաւ, և Զենոնի դպրոցին մօտեցաւ՝ որ արդէն իր նախկին խիստ սկզբունքն շատ մեղմացուցեր էր։ Այս երկու իրարու նախանձորդ իմաստասիրութեանց մէկմէկու մօտենալն իրենց հանդիման ուկարանալուն նշանն էր. և յունական իմաստասիրութեան երկրորդ շրջանին վախճանն կը գուշակէր. և ճիշդ նոյն ատեն այս իմաստասիրութիւնն Հռովմայեցւոց մէջ կը մտնէր։ Նոյն ատենն կերևնար ատենց մէջ անուանի քերթուածն Յաղագս բնութեան էից, որ Լուկրետիոսի հրաշակերտն է. և Կիկերոնի ճառերն Ակադեմական, Տուսկուլեանք, Յաղագս պատշաճից և Յաղագս ձշմարիտ չարեաց և ձշմարիտ բարեաց։ Փիլ մի յետոյ Սենեկայ դպրոցն գործնական բարոյականի քանի մի մասանց վրայ իր հմուտ և ճարտար գրքերն։ Սակայն որչափ որ Հռովմայ քերթողաց երևակայութիւնն և ճարտարախօսաց աշխոյժն վառվռուն էր, սակայն իրենց անգիտական իմաստասիրութիւն մի չունեցաւ։ Լուկրետիոս, ինչպէս որ ըսինք՝

Եպիկուրոսի աշակերտ էր, և Կիկերոնի ու Սենեկայի գրուածներուն մէջ եղած ազէկ նիւթերն ալ ատոյիկեանցմէ առնուած են. մեռցած երևելի մարդիկն ալ յուներական իմաստասիրութեան մէջմէկ ազանդոյն հետևեցան. ինչպէս Ակադեմիոյ վարդապետութեանն հետևեցան Մ. Բրուտոս, Մ. Տերենտիոս, Վարրոն որ շատ հմուտ մարդ էր, Մ. Պիսոն և Մ. Տուլիոս Կիկերոն զոր յիշեցինք։ — Ատոյիկեան ազանդոյն հետևողք եղան Ակիպիոն ափրիկեցի, Մուտիոս Սկեւոլա, Կ. Լելիոս, Լ. Փիլիպպոս, Մ. Կատոն, և յետոյ վերն յիշած Լ. Աննէոս Սենեկա ապանիացի Ներոնի վարժապետն, Լուկանոս, Պերսիոս, Դիոն ոսկեբերան, Եպիկտետոս փռիւգացի, ստոյիկ Եպաֆրոդիտեայ զոր յիշեցաք, Փլաբիոս Արրիանոս և Մարկոս Աւրելիոս կայսր։ — Եպիկուրեայց հետևեցան Լուկրետիոս Կարոս զոր վերն յիշեցին, Տ. Պոմպոնիոս Ատտիկոս, Լ. Տորկուատոս, Կ. Վելլէյոս, Կ. Տրեբատիոս, Կ. Կասիոս, Ոռատիոս Փլակկոս բանասուղծն, և բան ոմանց նաև կրսերն Պլինիոս։ — Ճեմարկանաց հետևողք եղան Տիրանիոն, Անդրոնիկոս հռոդացի, Պլինիոս երէց բազմահմուտն 'ի բնագրամութեան, Աղեքսանդր Աֆրոդիսեան որ լուծիչ Արիստոտելի կոչուեցաւ և Աթենքի, Աղեքսանդրիոյ և Հռոմայ մէջ վարժապետութիւն ալ ըրաւ։ Մ. Ա-

թելիրա կայսեր ժամանակն էր և մեծա-
նուն իմաստասէրն և բժշկապետ Գալե-
նոս՝ որ աւելի Պլատոնի վարդապետու-
թեան սիրող և մեկնիչ եղաւ։

Վերջին շրջան յունական իմաստասիրութեան.

Յունական իմաստասիրութեան վերջին
շրջանն այնպիսի կնիք ունի՝ որով նախընթ-
թացներէն բոլորովին կը զանազանի. և
ասոնք են ա. արևելեան գաղափարաց
ազդեցութիւնն. բ. Կրօնական խնդրոց
սիրելն. գ. շափազանց վարկ նախկին ա-
ւանդութեանց և գրութեանց. դ. աս-
տուածային ազդեցութեան և եռանդեան
ոճի տեղ գրուիլն. և ե. գիտութեանց ըն-
կերզիլն 'ի կարծեցեալ յաստուածազարդ
հրաշից և 'ի մոգութենէ։

Յունական իմաստասիրութեան այս տար-
օրինակ փոփոխութեանցս՝ որով արևել-
եան անտարապաշտութեանց հետ խառ-
նուելուս, շատ պատճառներ եղան, որոնց
առաջինն էին Աղեքսանդրի և Հռոմայե-
ցւոց պատերազմներն, և Աղեքսանդրիոյ
քաղքին հիմնարկութիւնն. և երկրորդ
Նիլոսայ տարկութիւնն և ազգային ոգւոյ
ազատութիւն. և վերջապէս գրական կրօ-
նից և իմաստասիրութեան դէպ իրար
ունեցած ձգողութիւնն, որ եղբերն ա-
ւելի սաստկացաւ՝ երբ քրիստոնէութիւնն

ցցուց նախկին վարդապետութեանց ընդունայնութիւնն։

Նոր սկեպտիկեանք. — Այս երրորդ շրջանիս սկիզբն ամէնէն առաջ դիմացնիս ելլող դրութիւնն սկեպտականութիւնն է, զոր նորոգեց Էնեսիդեմոս տարօրինակ և զօրաւոր պատճառաբանութեամբ մի ընդդէմ գոյութեան ճշմարտութեան, ընդդէմ կարելութեան ուղղագատութեան, և ընդդէմ սկզբան պատճառաւորութեան։ Էնեսիդեմոսէ ետև եկան ուրիշ սկեպտականք՝ որոնց երևելիներն եղան Ագրիպպան՝ որ երկմտութեան տասն պատճառներն հնգի վերածեց. Սեքստոս Ներ հմտական կամ փորձառու (Էմպիրիկոս), որ անուանի ճառեր գրեց պիւռոնեան վարդապետութիւնն անթերի մեկնաբանելով։

Նոյն ատեններն կերևին մատենագիրք և աղանդապետք՝ որոնց վարդապետութիւններն կէս մի իմաստասիրականք են և կէս մի կրօնականք, որոնցմէ կերևի թէ արևելեան ծածկագիտութիւնն յունական իմաստասիրութեան վրայ կը տիրէ։ Այսպիսիք են Արիստորուլոս և Փիլոն երրայեցիք. Կնոստիկեանք, և յետոյ Ապոլոնիոս Թիանացի. այլ ևս Ապուլէոս, Պլուտարքոս, Նումենիոս՝ որ ներհակ կէտերէ ելլելով մի և նոյն եզրակացութեանց մէջ գտնուեցան, որոնք յունական աղանդոց և արևելեան գաղափարաց խառնուրդ մի էին։ — Բայց այս

մանաւորաց Ջանքերն Աղեքսանդրիոյ դը-
պրոցին վարդապետութեամբն անհետ ե-
զան, որք և երկու դաս բաժնուեցան և
ըստեցան Ընտրականք և Կրսեր կամ Նոր
պրատոնականք։

Ընտրականք. — Երբ իմաստասիրաց հինգ
գլխաւոր աղանդներն՝ որ են պիւթագո-
րեան, ակադեմեան, ճեմական, ստոյի-
կեան և եպիկուրեան, մէկմէկու հետ կը
կռուէին, մեր թուականութեան սկիզբն
Աղեքսանդրիոյ մէջ նորօրինակ ոճ մի եկաւ՝
որ էր ուրիշ աղանդի մի չհետևիլ, այլ ա-
նոնց մէջէն բանաւորն ընտրել, որով և
ըստեցաւ Ընտրական։ Առաջ հիմնադիրն
եղաւ Պատամոն աղեքսանդրացի, որուն
հայրենիքն արդէն շատ ծաղկած էր ուս-
մամբ և մանաւանդ հռչակաւոր մատենա-
դարանովն, որուն համար աշխարհիս ա-
մէն կողմէն իմաստասէրք և գիտնաւորք
հոն կը վազէին։ — Ընտրական իմաստասի-
րաց կարգն սեպեցին իրենք զիրենք եկե-
ղեցւոյ առաջին դարուն մէջ եղած մոլի ա-
զանդապետներն Սիմոն մոգ, Մենանդր,
Սատուռնինոս, Բասիլիդէս, Վալենտի-
նոս, Կերինթոս, Մարկիոն և Մանի և այլք՝
որոնք արևելեան, եգիպտական և հելլե-
նական գաղափարներն իրարու հետ խառ-
նելով՝ իմաստասիրութեան և աստուածա-
բանութեան հերձուածներ յարուցին՝ զորս
և մերժեց եկեղեցին։

Իսկ ընտրական ոճին խոհական մասին

հետևեցան նախնի քրիստոնեայք. նախ եպիսկոպեան աղանդն բոլորովին մերժելով՝ որպէս յոյժ հակառակ աւետարանի, իսկ հակաճառութեան մէջ կընդարէին զԱրիստոտէլ, բարոյականի մէջ զստոյիկեանս, իսկ աստուածաբանական խնդրոց մէջ ինչպէս յաղագս դիւաց կամ՝ հրեշտակաց և հոգւոց մարդկան՝ կընդարէին զՊլատոն՝ զոր և վեհագոյն կը համարէին քան զայլս և իր վարդապետութիւնն քրիստոնէական կրօնից մօտ։

Այս դպրոցէս քրիստոնէից մէջ առջինն եղաւ Աթենագորաս, որուն յաջորդեց Պանդենաս, ետքն մեծն Կղեմէս աղեքսանդրացի, Երանոս, Յուստինոս վկայն, Տերտուլիանոս, Մինուկիոս Փելիքս, Որոգինէս, Հերակլէս, Անատոլիոս եպիսկոպոս, Ամնոբիոս, Լակտանտիոս, Եւսեբիոս, Սինեսիոս, Ամբրոսիոս, Աւգոստինոս, Հերոնիմոս, Բասիլիոս, Գրիգոր աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, և նախնի եկեղեցւոյ Հարց շատերն։

Իսկ մեր մէջ Սահակայ և Մեսրոպայ ետքն Եղնիկ իմաստասէր, որ քաջութեամբ հերքեց նիւթապաշտից, պարսից, մանիքեցւոց և Մարկիոնի զանազան մոլորութիւններն, ինչպէս նաև յոյն իմաստասիրաց քանի մի թիւր կարծիքներն։ Դաւիթ անյաղթ որ գրեց Յաղագս սահմանաց գիրքն, ու Արիստոտելի քանի մի գրուածքն ալ թարգմանեց ու մեկնեց թէ և անիմա-

նալի ոճով։ Մովսէս Խորենացի որ մեծ անուն հանեց քերթողութեամբ և իմաստասիրութեամբ։

Պլատոնեանք կրսերք. — Ընտրականաց դպրոցէն ելաւ Միաւորչականաց կամ Պլատոնեանց կրսերաց աղանդն՝ որոնք կը ջանային ամենայն աղանդոց վարդապետութիւններն իրարու հետ միաբանել. ասոնց գլուխ եղաւ Ամմոնիոս Սակկա աղեքսանդրացի որ թէ և քրիստոնեայ ծնողաց զաւակ և աշակերտ մեծին Կղեմայ աղեքսանդրացւոյ՝ սակայն դարձեալ 'ի հեթանոսութիւն, և տեսնելով թէ քրիստոնեայք Պլատոնն շատ կը յարգեն՝ ուզեց ցուցնել թէ անոնց մէջ օրշափ ազէկ բան կայ՝ ամէնն ալ 'ի Պլատոնէ առնուած է, որով և անոր խօսքերն աստուածաշնչի ըսածներուն յարմարցնելու համար՝ բոնի մեկնութիւններ կուտար. որով և նոր ոճ մի իմաստասիրութեան հնարեց և քրիստոնէութեան հետ ուզեց հաւասար դնել։ Շատ աշակերտներ ունեցաւ՝ որոնցմէ էին Երեննիոս և Պլոտինոս, որ նոյն ոճն Հռովմայ մէջ մտուց և աշակերտեց զԱմերինոս Թոսկանացի, զՊաւլինոս սկիւտուպօլսեցի զԵւստոքիոս աղեքսանդրացի, զՉետ աբրաբացի, զՉոտիկոս, զԿաստրիկոս, զՓերմոս, զՄարկելոս, զՈրոնտիոս, զԱբինիլոս և զՈրոգատիանոս։ Ասոնց մէջէն քրիստոնէից ամէնէն աւելի թշնամի եղաւ Պորփիւր և իր աշակերտներն Թէոդոր և

Յամբլիկոս, Եւսեբիոս մինդագի, Մաքսիմոս եփեսացի՝ որոց հետևեցաւ և Յուլիանոս ուրացող կայսրն, և անոնց մեծ պաշտպան և քրիստոնէութեան սխեերիմ թշնամի եղաւ. բայց անոր մեռնելէն ետև այս աղանդս ալ սկսաւ անկանել, և վեցերորդ դարուն մէջ Յուստինիանոս կայսեր ձեռքով բոլորովին վերջացաւ, և Ա. Թէոդի դպրոցն ալ գոցուեցաւ 529ին, որով և վերջացաւ յունական իմաստասիրութիւնն գրեթէ հազար երկուհարիւր տարի դիմանալէն ետև։

ՅԱՒԵԼՈՒԱԾ. Իմաստասիրութիւն արաբացոց. — Հիւսիսային ազգաց արշաւանքէն հինգերորդ դարուն մէջ արևմտեան կայսրութիւնն վերցուելով դպրութիւնք և գիտութիւնք ալ անոր հետ ջնջուեցան. այնպէս որ անկէց ետև եկած երկու դարերու մէջ անուանի մարդ մի չելաւ արևմուտք, բաց 'ի Բոյէտիոսէ՝ որ ճեմական իմաստասիրաց գլխաւոր գործերն թարգմանեց. 'ի Կասիոդորոսէ, 'ի Ս. Գրիգորէ Մեծէ և 'ի կրաներոյն Գիոնիսեայ։ Իսկ արևելեայց մէջ կը յիշուին Էնիաս գազացի, Եւմենոս՝ որ Յապագս բնութեան մասին գիրք մի գրեց, Զաքարիա միտիլինեցի, Յովհաննէս Փիլոպոն և Սուրբն Յովհան դամասկացի։ — Այն առաններն իմաստասիրութեան անուամբ պատուեալ էին մեր ազգին մէջ Ա. Նանի շիրակացի հմտարար և աստեղաբաշխ, Յովհաննէս իմաստասէր,

Ստեփանոս սիւնեցի և այլք։ — Իսկ յետոյ ութերորդ դարուն մէջ Լեռն իսաւրացի կայսեր հալածանքէն փախչելով իմաստասէրք Արաբացւոց քովն ապաւինեցան, որոնց մէջէն Ամանդօր և Հարոն Ռաշիտ իշխաններն զանոնք Բաբելոն ժողվելով շատ պարգևներ տալով անոնց, յաբաբացի լեզու թարգմանել տուին Յունաց իմաստասիրաց գրքերն՝ մանաւանդ Արիստոտէլիններն[1]։ Անոնցմէ եռև աւելի նախանձաւոր եղաւ Ամանդն, և իրեն յաջորդ ամիրապետներն իրենց թագաւորութեան հետ գիտութիւններն ալ ծաւալեցին Ասիոյ, Աֆրիկոյ և Սպանիայի մէջ ինչուան հնգետասաներորդ դար։

Արաբացի գիտութեանց սկզբնաւորող եղաւ Յովհան Դամասկացի որ Ամանդօր

1 Մեր Գրիգոր Մագիստրոս իշխանն որ Արաբացւոց ամէն իրացն հմուտ էր՝ այսպէս կաւանդէ անոնց մէջ գիտութեանց և ուսմանց սկիզբն. «Սահլ ոմն որդի Եապհոյ քաղդէացի և Ահարոն քահանայ, ոչ թարգմանիչք և յոյժ տեղեակք յունական լեզուին և արաբացւոց՝ թարգմանեցին նախ զբժշկականն։ Եւ իբրև ոչ եղեն հատու Ասկլեպեայ և Հիպոկրատեայ բառին՝ հարկ եղև նոցա զքերականութիւն նախ թարգմանել և զՇարատանութիւն, և զկնիռ այնորիկ զիմաստասիրութիւն, և ապա մի ըստ միոջէ.. և այսպէս գրեալ է 'ի մատեանս նոցա ստուգութեամբ թէ որչափ թուղթս թարգմանեալ ցուցանէին արքային, յոսկւոյն արաբացւոց յաշնուէն պարտ ծածկեալ լինէին»։

կը կոչուի, և Հոնայ Իպն Իսահակ, որոնց յաջորդեցին Ալկենտի, Ալբիսարաբի՝ որ Արիստոտելի վրայ շատ լուծմունք գրեց, Ալբատարի, Ալբազի, Ավերրոէս և Ավիկեննա, որոնք ամէնն ալ բիւրաւոր մեկնութիւններ գրեցին Արիստոտելի վրայ և շատ տեղ ալ խանգարեցին, որով և Դպրապրոցական իմաստասիրութեան սկզբնաւորութեանն պատճառ եղան։

ՄԻՋԻՆ ԴԱՐ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՆ

Դպրոցական կամ դասական իմաստասիրութիւն ըսուելուն պատճառն այն է՝ որ Մեծին Կարոլոսի թագաւորութիւնէն եւեւ հաստատուած դպրոցներու մէջ կը գործածուէր։ Գլխաւոր կնիքն են եկեղեցական իշխանութեան մերթ բացարձակ տէր և մերթ յարձակմունք կրելն՝ի հակառակորդաց, կրօնական խնդրոց տիրելն, և հաւաքաբանական ոճի գործածութիւնն։ Երեք գլխաւոր շրջան կը բովանդակէ՝ իմաստասիրութեան ստուգաբանութեան հետ ունեցած յարաբերութեանց նկատմամբ։

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ — Ինեներորդ դարէ՝ երկուտասանեներորդ դարուն վերջն. Բացարձակ հպատակութիւն իմաստասիրութեան առ աստուածաբանութիւն։

Այս շրջանս կը բացուի Ալկուինոս եղբայրի ձեռաք՝ զոր Մեծն Կարոլոս իր դպրոցաց վրայ դրեր էր։ Ալկուինոսէ կէս դար

եւեւ՝ Ակոմտ Երիկէն՝ Կարոլոս Կունոմի ժամանակակից՝ անոր արքունեաց մէջ 'ի յունական թարգմանեց Դիոնեսիոս աբիոսպագացւոյն գործերն՝ որով նորոգուեցան աղեքսանդրեան ծածկագիտութեան մոլորութիւններն։ — Ինն երորդ դարուն սկիզբներն Լոթարիոս կայսեր հրամանաւ շատ վարժոցներ բացուեցան Իտալիոյ եւ Ֆրանկիոյ մէջ. բայց յետոյ աշխարհական վրդովմունք վրայ հասնելով՝ ուղիտութիւնն նորէն տիրեց ինչուան մեռասաներորդ դարուն վերջերն։ — Տասներորդ դարուն մէջ անուանի եղաւ պապն Կերբերտոս իրեն շափաբանական ուսմանց ընդարձակութեամբն՝ զոր Պապանիոյ մուրիներէն ստացած էր։ — Մեռասաներորդ դարուն սկիզբն յարեան Սուրբ Հաղորդութեան վրայ եղած վէճերն Բերանկերիոսի տուրեցւոյ եւ Լանֆրանկիոսի պուխացւոյ մէջ որ վարդապետութեան ողջմտութեանն վնասակար եղան։ 1089ին Կերբերի Ռոսկելինոս Քոմփիէնեի կանոնիկոսն՝ որ մեծ վիճաբանութիւն մի յարոյց համարելով եթէ ընդհանուր գաղափարք կամ հաներականք կամ տիեզերականք՝ բառք միայն են, որով միայն իրաց որակքն կը նշանակեմք, կամ թէ բաներք ընդհանուր բնութիւնք 'ի ձայնս միայն են և 'ի միտս մեր, և ոչ 'ի բնութեան իրաց. այս կարծեաց հետեւողքն Անուանականք ըսուեցան. իսկ հակառակորդք Իրականք ըսուեցան

որք կը պնդէին թէ արտաքոյ անհատից և մասնաւորաց գոն տեսակք ինչ և բնութիւնք ընդհանուրք, որք մասնաւորաց վերայ յարուելով կորոշեն զանոնք յայս և յայն սեռ կամ տեսակ։ Այս յետիններուս մէջ յիշատակութեան արժանի են Գուլիէլմոս Շամբոցի Աբելարտոսի վարպետն, և Ս. Անսելմոս Կանտորբերիի եպիսկոպոսն (ծնեալ 'ի 1034 և մեռեալ 'ի 1109) որ երկրորդ Աւգոստինոս ըսուեցաւ։ — Անուանական և Իրականաց կարծիքներն ուզեց միացնել Աբելարտոս, բայց յանդգնութեամբ քրիստոնէական խորհուրդներն, մանաւանդ Ս. Երրորդութեան խորհուրդն ալ, իր կարծեաքն ուզելով մեկնաբանել՝ մոլորութեանց մէջ ընկաւ. և Ս. Բեռնարդոսի հզօր հակառակութեամբն հերքուելով կրկին անգամ դատապարտեցաւ Սուասոնի և Սանսի ժողովոց մէջ յամի 1140, և մեռաւ երկու տարիէն ետև։ — Երբոր եկեղեցին Ապելարտոսի յանդուգն վարդապետութեամբն վրդոված էր՝ Հիւգոյ տը Սէն Վիկտոր վանականն իր խմաստուն և բարձր և ուղղախոհ վարդապետութեամբն մեծ անուն հանեց քրիստոնէական խորհուրդներն մեկնաբանելով։ — Դպրոցական խմաստասիրութեան առաջին շրջանն կը գոցէ Պետրոս Ղոմբարացի Լոմբարդոս կոչուած. իր անուանն մշանջենաւորող գրուածքն է Հաւաքումն վճռոց հարց եկեղեցւոյ 'ի վե-

բայ ամենայն մասանց հաւատոյ, որով և շատ անգամ վարդապետ վճռոյ անունն կը տրուի իրեն։

Մեռասաներորդ դարուն մէջերն գիտութիւններն նորէն ծաղկիլ սկսելով մեր մէջն ալ ընտրական իմաստասիրութեամբ անուանի եղան Նարեկացիէն եռև մեծ և իմաստասէր իշխանն Գրիգոր Մագիստրոս, քիչ մի ետքն Յովհաննէս Սարկաւագ վարդապետ թուաբանական և տումարական գիտութեանց հմուտ։ — Գուիտոն անունով մէկն նորոգեց Իտալիոյ մէջ երաժշտութիւնն, և Իրնէրիոս գիրաւագիտութիւնն։ — Երկուասաներորդ դարուն մէջ տեղերն Գրատիանոս անունով մէկն քահանայապետական կոնդակներն և սահմաններն հաւաքեց և կանոնական իրաւանց հեղինակ եղաւ։ Եւ նոյն դարուն վերջերն Գերարտ Կրեմոնացի և Կամպան Նովարացի շափաբերութեան և աստղաբաշխութեան ուսմունքն ծաղկեցուցին։ — Նոյն ատեններն մեր մէջն ալ աստուածաբանական և իմաստասիրական ուսմամբ անուանի եղան Սարգիս և Իգնատիոս Վարդապետք, Ն. Շնորհալի և Ն. Լամբրոնացի և առակախօս և օրէնագէտն Մխիթար Գոշ։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԶԱՆ. — *Երկրաչափութիւն գործոց վերջին ցչութիւնաւորաց. Իմաստասիրութիւնք և աստուածաբանութիւնք զուգակիցս.*

Այս երկրորդ երջանիս սկիզբն Արիստոտելի և արաբացի իմաստասիրաց գործոցն լատիներէն թարգմանելով և Եւրոպոյ մէջ տարածելով մեծ շարժման պատճառ եղան. առջի բերան մնաց այս յուզմունքս՝ վերատակար մոլորութեանց առիթ եղան. օրինակ իմն Փարիզու դպրոցին մէջ համաստուածութիւն սկսաւ ուսուցանել Ամորի, 'ի Շարթր քաղաքէ, և Ֆաւիտ 'ի Տինանէ. բայց կամաց կամաց եկեղեցւոյ խիստ կանոնադրութեամբն յուզմունքն հանդարտեցան, և դպրոցական իմաստասիրութիւնն նորոգելով և մեծնալով առանց հաւատոց վնաս մի բերելու՝ երևելի և տեսական գործեր հրատարակեց, և հռչակաւոր անուամբ անձինք յառաջ բերաւ։

Աղեքսանդր տը Հալէն եռեռ՝ որ վարդապետ անյաղթելի կոչուեցաւ՝ կերևնայ Մեծն Ալբերտոս գոմինիկեան կարգէն (ծնեալ 'ի Սուաբիա յամին 1205 և վախճանեալ 'ի 1280.) որ հաւատոյ քաջութեամբ մըշակեց գաստուածաբանութիւնն, զբա-

բոյական, գչափաբանութիւն, գբերակա-
նութիւն և գբնալուծութիւն. շինեց նաև
գմեկնութիւն բոլանդակ գործոց Արիս-
տոտելի, Աստուածաշունչ գրոց և Պե-
տրոսի Լոմբարդոսի, և իր աշխատասի-
րութիւնն օրինակ և քաջալերութիւն ե-
զաւ՝ որով բանասիրական ուսմունք վա-
նօրէից մէջ ծաղկեցան։ — Ալբերտոսի ա-
շակերտեցաւ Սուրբն Թովմաս ազուինացի
կոմսական ցեղէն, (ծն. մերձ 'ի Նափոլի
յամին 1225 և մեռեալ 'ի 1274,) որ հրեշ-
տակ դպրոցի կամ վարդապետ հրեշտակային
կոչուեցաւ. իրաւ իր վարդապետին ըն-
դարձակ հմտութիւնն չունէր՝ սակայն զо-
բաւոր պատճառաբանութեամբն ու վար-
դապետութեան ճշդութեամբն զանիկայ
գերազանցէր. շատ գործերէն զատ գրեց
զԲոմանոպակոբիան աստուածաբանութեան՝ ո-
րուն մէջ բնազանցական բարոյական նաև
քաղաքագիտական գժուարին խնդիրնե-
րըն՝ զարմանալի հաստատութեամբ մի և
բանի և հաւատոց համաձայն մտքով մի ա-
ռաջ կը բերէ և կը լուծէ։ — Երեքտասանե-
րորդ դարուն մէջ կերևի նաև Գուլիէլմոս
Օվերնիացի եպիսկոպոս Փարիզոյ վախ-
ճանեալ 'ի 1249։ — Վինգենտիոս պովե-
ցի վախճանեալ 'ի 1261. որ Սրբոյն Լուդո-
վիկոսի դրապետն եղաւ, որ և ներշրջանա-
կաց ձևով հաւաքմունք մի ունի Հայելի ա-
նուամբ։ — Յովհաննէս Ֆխտանցա որ ա-
ւելի ծանօթ է ընդ անուամբս Պոնավէն-

Թուրա (1221–1274)՝ի կարգէ Արբոյն Փրանկիսկոսի՝ քրիստոնէական խորհրդաղգաց վարդապետաց մէկն։ — Ռոճէր Պաքոն որ գրեց զմատեանն անուանեալ Գործ մեծ և չափաբերական ուսմանցն և եղական գաղափարացն ու գիւտիցն համար վարդապետ սքանչելի կոչուեցաւ։ — Ռէյմոն Լիւլ մայորքացի (1244–1315) գտիչ հանրական արուեստի կամ տեսակ մի բանախօսական մեքենայի՝ որով կը համարէր լուծանել զամենայն խնդիրս և առարկուածս։ — Վերջապէս Դունս Սկոտ Փրանկիսկեան (1275–1308) որ իմաստասիրական ուսմանց մէջ ներքութիւն և ճրագութիւն մուտց. և մէկն չկար որ անոր հասնէր խնդիր մի բաժանելու և գժուարութիւն մի լուծելու կողմանէ. անոր համար իր ժամանակակիցքն վարդապետ նրբին անուանեցին զինքն. իր գլխաւոր գործն է վճռաց վարդապետին մեկնութիւն. շատ անգամ Արբոյն Թոմմայի հետ կը հակառակի. ուսկից առաջ եկաւ Սկոտեանց և Թոմմայեանց հակառակութիւններն միջին դարուն վերջերն։

Մեր մէջ յերեքտասաներորդ դարուն իմաստասիրական ուսմամբ կը ծաղկէին Վանական վարդապետ, Վարդան մեծն, Յովհան եղնիկացի կամ Պլուզ, Եսայի Նրշեցի և այլք. բայց դպրոցական ոճն գեռ ասոնց ծանօթ չէր. և չորեքտասաներորդ դարուն մէջ մտաւ տարածուեցաւ Բար-

թուղթմէջ լատինացոյ, Ներսէս Պա-
լիենց, և Յակոբ Ջահկեցոյ ձեռաքն, մա-
նաւանդ Առաքելաբերեանց և Մարաբերեանց
գրոց թարգմանութեամբն։ Ասոնց ոճին և
լեզուին հետեւեցան շատերն՝ որով Հայե-
րէն յատակ շարագրութիւնն ազատեցաւ։

ԵՐԵՐՈՐԴ ԵՐԶԱՆ. — Զարիքատանեցորդ դարէ
ցմինչեւ ատանեցորդ. Իմաստասիրութեան
և աստուածաբանութեան ատենաւոր իրա-
բանէ զատուիլն.

Այս շրջանիս մէջ առջի անուանն է անգ-
լիացին Գուլիէլմոս Ոքկամ Ֆրանկիսկեան,
(ծնեալ 'ի կոմսութեանն Սըրրի և վախճա-
ճանեալ 'ի Միւնիխ յամին 1347.) Փիլիպ-
պոս Գնզեցկին և Լուդովիկոս պաւերացի
կայսեր կողմն բռնելով զրեց հակառակ
սուրբ աթոռոյն. իմաստասիրութեան մէջ
ալ ընկալեալ վարդապետութիւններն հեր-
քեց, և ուելի ազատամիտ ոճոյ մի օրի-
նակ տուաւ. անուանակոչեց կարծիքն՝ որ
ընդ Հանրապէս մերժեալ էր, նորոգեց ին-
քըն քանի մի հակառակորդներ՝ սակայն
շատ ալ աշակերտ ունեցաւ. որպիսիք եղեն
Պուրիտէն, որ ծաղկէր 'ի (1350). Հենրի-
կոս Հեսացի (1380), Պետրոս ա' Էյլի (1350–
1425). ասոնք ամէնքն ալ ազատամիտ և

անսանձ հանճարներ ըլլալով՝ նորանոր ուղիներ բացին, և գպրոցական ոճն անպատիւ ընելով՝ անոր տեղ սկսաւ զարգանալ խորհրդական ոճն, զոր և տարածեց Յովհաննէս Թաուլէր Գերմանիոյ մէջ, և Յովհաննէս Գերսոն Փարիզու Համալսարանին ուղղիչն՝ Ֆրանկիոյ մէջ, որուն համարեցան շատերն Յապագա եկեղեցոյ Քրիստոսի ըսուած գիրքն։ Ըստ Գերսոնի ճըշմարիտ իմաստասիրութիւնն խորհրդական աստուածաբանութեան վրայ հաստատուած է՝ որ այն ալ հիմնեալ պիտի ըլլայ 'ի վերայ ներքին փորձառութեանց բարեպաշտութեան զգացմանց եկեղեցոյ Աստուծոյ, և 'ի վերայ ներհայեցութեան հոգւոյ պարապելոյ յերկնաւորս։ — Նոյն ատենները Ռէյմոն տը Սեպոնտ որ կը վարժապետէր 'ի Թուլուզա՝ աստուածաբանական վարդապետութեան մեկնութիւն մի ջանաց գտնել հաստատեալ 'ի վերայ զննողութեան բնութեան և 'ի մասնաւորի 'ի վերայ ծանօթութեան մարդոյ։

Ատոնք են ահա գպրոցական իմաստասիրութեան վերջին մեծահամբաւ անուններն. որ ասկէց ետև երթալով կը նուազի՝ և վերջապէս բոլորովին բնաջինջ կըլլայ՝ երբ տպագրութեան գիւտն, բանասիրական գիտութեանց նորոգուիլն, և նոր աշխարհի գիւտն ընդարձակ շարժում մի կուտան մարդկային մտաց։ — Վեշտասաներորդ դարուն մէջ նորանոր գրութիւն-

ներ երևան կելլեն՝ որոնց շատն հնոց նորոգումն էին, սակայն նորութեան հզօր կնիք մի կրելով վրանին. որպիսիք են գրութիւնքն զոր հնարեցին Վանինի, Ռամիւս, Յորդանաս Պրունոր, Քամբանէլլա և Թելեսիոյ։ Սակայն իմաստասիրութիւնն նորոգելու փառաւոր պարծանքն՝ եօթնեւտասներորդ դարուն պահուած է եղեր Պաքոնի և Կարդեսիոսի ձեռքովն։

ԱՐԴԻ ԴԱՐ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՊԱՊՈՆ ԵՒ ԿԱՐԴԻՆԱԼՍ

Ֆրանկիսկոս Պաքոն ծնեալ ՝ի Լոնտոն յամին 1561, իր մանկութենէն այնպիսի ցոյցեր տուաւ իր հանճարոյն՝ որ Եղիսաբէթ Թագուհին ծիծաղելով զինքն իր պզտիկնքապահն կամ՝ փոխարքայն կանուանէր. 1594ին սկսաւ տէրութեան պաշտօններու մէջ մտնել. իսկ երբոր Յակոբ առաջին Թագաւորեց 1603ին շատ պատիւներ շնորհելէն ետև՝ անուանեց զանիկայ տէրութեան մեծ ատենապետ, պարոն Վերուլամի և գերակոմս Սրբոյն Ալբանոսի, որ և իրեն յաջողութեանց վերջին սահմանն եղաւ. վասն զի նոյն տարին հասարակաց խորհրդարանն անոր վրայ ամբաստանութիւն ընելով իբրև կաշառակուրծ՝ բարձրագոյն խորհրդարանէն անարգաբար դատապարտեցաւ. և եթէ Թագաւորն միջնորդութիւն ըրած չըլլար՝ ազատութիւնն և ստացուածքն ալ կորսնցնէր. վերջապէս մեռաւ 1626ին.

Պարոն գնա տասնումեկ տարուան շեղած՝ սկսաւ իմանալ ճեմարանաց վարդապետութեան ունայնութիւնն, և այն ատենէն միտքն դրաւ ընդհանուր նորոգութիւն մի ընել 'ի գիտութիւնս. և այս շէնքս հիմէն բարձրացնել ուզելով՝ ինչպէս որ ինքն կըսէր, այսինքն մարդուս հասկացողութենէն՝ Նորոգութիւն մեծ կոչեց այն գործն՝ որուն մէջ կը բացատրէր նոր իմաստասիրութեան սկզբունքն. այս գործս վեց մասն պիտի ունենար. ա. պաշտպանութիւն գիտութեանց և ցուցումն միջոցաց բարգաւաճելոյ զնոսին որ և կըսուի, Ցաղագս զարգացման և պատուականութեան գիտութեանց. բ. Նոր ոճն կամ Նոր գործիքն գիտութեանց. գ. Հաւաքումն գիտողութեանց կամ Պատմութիւն բնական և փորձառական. դ. յարաբերութիւն ոճոյն ընդ գիտեալ իրաց կամ Սանդուխք մտաց. ե. իմաստասիրութիւն առ ժամանակեայ կամ Նախաշաւիղք՝ այսինքն կանխաբանութիւնք իմաստասիրութեան. զ. իմաստասիրութիւն հաստատեալ կամ Իմաստասիրութիւն երկրորդ կամ գործնական։ Այս ամէն մասանց ծրագիրն շինած է, բայց առաջինն և երեք կատարած. նոյն իսկ Նոր գործիքն թերի մնացած է։

Պարոնի երկասիրութիւնքն շատ նիւթ կը բովանդակեն. բայց ամէնէն աւելի ընդարձակ և խորունկ ճառած նիւթն՝ ոճոյ վրայ եղածն է. և կրնանք ասել որ Կարդե-

սիրաէն առաջ ինքն առաջին իմաստասէրն եղած է այս նիւթոյս կարևորութիւնն բմբռնող. ուստի շատ անգամ կը կրկնէ թէ մարդուս մտաց զարգացումն՝ իր ջանից արուած ուղղութենէն կը կախուի, և թէ լաւ ուղղուի անչուշտ կը զարգանայ, և թէ դէշ ուղղուի միշտ կը մոլորի՝ և այնչափ առաւել՝ որչափ որ իր կարողութիւնքն աւելի են, նման արագոտն սուրհանդակի որ մոլար ճամբայ մի բռնելով այնչափ աւելի իր նպատակէն կը հեռանայ՝ որչափ որ աւելի ուժով և շոյտ կը վազէ։

Պարոն ամէնէն գերազանց ոճն փորձառութիւնն կը սեպէ. որովհետև իմաստասէրն բնութեան թարգմանն ու պաշտօնեայն է՝ պէտք է զանիկայ ազէկ ճանչնալու համար՝ գիտողութիւն ընէ. ասով միայն է որով տէր կըլլանք գիտութեանց և աշխարհի։ Իսկ գիտողութիւնն պէտք է որ երկայնմտութեամբ և զգուշութեամբ ըլլայ. բաւական չէ որ իրրև աչակերտ հլու, մտիկ ընէ ձայնի բնութեան, այլ և հարցարանէ զանիկայ, և Պրոտէոսի պէս զանիկայ շարշրիէ անոր գաղտնիքքն իմանալու համար, և ստիպելու իրն կորէ կորատէ։ — Փորձառութեան հետ միացած պէտք է ըլլայ բանասիրութիւնն. ինքն գիտողութեամբ գոհ եղող իմաստունն մրջիւնի կը նմանցընէ՝ որ հատիկ ժողվելն գիտէ՝ բայց վարուցանի արուես-

ոչն չգիտեր. իսկ խնամատարէրն պէտք է կրեսէ մեզուն նմանելի՝ որ այլ և այլ ծաղկունքէն ծծած հիւթն կը լմէ ու կը գոյէ։ — Բանաստեղծութեանց մէջ ալ ամէնէն աւելի պահանջածն՝ փորձառութեան վրայ հիմնեալ ներքածութիւնն է՝ որ 'ի մանաւոր իրաց յընդհանուր օրէնս կը բարձրանայ։ Եւ այնչափ ներքածութեան օգտակարութեամբն միայն գրագած է՝ որ արտածութիւնն անպէտ կը սեպէ, մանաւանդ շարաբանութիւնն։

Բայց Պաւլոն այս ընդհանուր սկզբամբքս գոհ չեղաւ, այլ և մանրամասն բացատրեց փորձառութեան կանոններն և դգուշութիւններն որ պէտք է բանեցընել, որպէս զի դիտողութիւնն արդիւնաւոր ըլլայ, և դիմաւորապէս Ղոր գործոյն երկրորդ գրոց մէջ. ուր բնութեան մեկնութիւնն երկու կէտի կը վերածէ. ա. փորձառութենէ յառաջ բերել ճշմարտութիւնս հանրականս, ապահմանս ձեռց կամ դիսկութիւնս իրաց. բ. ծանուցեալ հանրական ճշմարտութիւններ գործածել նորանոր փորձառութեանց համար։ Ոչ միայն կը պատուիրէ խնամով դիտել ամէն դիպուածի մէջ, այլ և գտաւորել և կշռել զամենայն դիտողութիւնս. ան առ ան յառաջ ընթանալ, և ատիճանարար ելթ բարձրանալ առ հետևութիւնս ինչ կամ բոմանդակութիւնս։ — Այս համառօտ նկարագրութիւնս բաւական զաղափար

մի կուտայ այն ոճոյն զոր ճանաչար բա-
ցատրեց Պաքոն և որ կոչուեցաւ միշտ ոճ
ենթաքնական։ — Իրաւ այս ոճս և գործա-
ծելոյ եղանակն մարդուս մտացն բնական
է և մարդկութեան հաւասար հնաւանդ,
սակայն կրնանք ասել որ Պաքոն ճանչցաւ
և ծանոյց զանիկայ անդիմադարձ ճշգու-
թեամբ. և Արիստոտելի պէս խորագնին
հանճարոյ մի արտաքնական բանասիրու-
թեան, շարաբանութեան և ապացուցու-
թեան վրայ ըրած վերլուծական աշխա-
տութիւնն ինքն աւարտեց ու պատկեց։
Այն օրէն որ մարդիկ սկսան նոր գործոյն
կանոնացն հետևիլ՝ բնական գիտութիւնք
հսկայաբար զարգացան։ Իրաւ է որ այս
ոճս այնչափ լաւ չյարմարիր հոգւոյ ծանո-
թութեան ուսմանն. և իրեն գրուածոց
բանի մի մասին ծուռ մեկնութիւններ տա-
լով, և նիւթական բնութիւնն մեկնելու
ջանքն անանելով՝ զինքն հեղինակ սեպե-
ցին նոր փորձառական դպրոցին, որուն
յետոյ հետևեցան Հոպս, Կասանոփ և
Լոք։

Պաքոնի մեռնելէն ետև տասն տարի ան-
ցեր էր՝ երբ հանճարաւոր գրուածքով մի
և անհամեմատ զօրութեամբ մի երևեցաւ
այն անձն որ իմաստասիրութեան նորո-
գութիւնն 'ի ծայրն պիտի հասցնէր, այս-
ինքն Ռենատ Կարդեսիոս կամ՝ Տէքարդ։

Կարդեսիոս ծնեալ 'ի Լա Հէյ քաղաքի
Թուրենայ յամին 1596, յետուսանց քանի

ԱլէՀ բաւած գաղթոցն գաստիարակեցաւ. և յետոյ Գերմանիոյ և Իտալիոյ մէկ մասն ճանապարհորդելով՝ անցաւ 'ի Հոլանտա 'ի 1629. քանի տարի ալ հոն կենալէն ետև՝ Շուեդի Քրիստինէ թագուհին զինքն իր քովն հրաւիրեց. և մեռաւ 'ի Սթոքոլմ յամի 1650։ — Կարգեսիսն առաջին հրատարակած գործն եղաւ Ճառն յաղագս ոնոյ 'ի 1637. իր միւս իմաստասիրական գրուածներն են Խորհրդածութիւնք, Սկզբունք իմաստասիրութեան և Կիրք հոգւոյ. սակայն իր ուրիշ գրուածոց մէջ բացատրած գաղափարներուն սկզբունքն՝ բոլորն ալ առջի գրուածքին մէջ կը բովանդակին. և այս գրուածքովս միայն այնչափ յեղափոխութիւն կրեց իմաստասիրութիւնն։

Ճառն յաղագս ոնոյ վեց մասն կը բաժնուի. Ա. մասն, Զանազան խորհրդածութիւնք սակս գիտութեանց. — Բ. մասն, Գիտաւոր կարգք ոնոյ. — Գ. մասն, Պատուէրք բարոյականի. — Դ. մասն, Ապացոյցք գոյութեանն Աստուծոյ և մարդկային հոգւոյ. — Ե. մասն, Կարգ հարցուածոց բնութեանութեան. — Զ. մասն, Զինչ ինչ պիտոյ է առ 'ի յառաջել 'ի խոյզս և 'ի խնդիրս համալսարանի։ — Այս է ահա բովանդակութիւն ճառին յաղագս ոնոյ՝ առաջին երկասիրութեան Կարգեսիսի, և իր Խորհրդածութեանց հետ 'ի միասին ամէնէն երևելին։

Շատ անգամ կրուի նիմէ Կարգեսեան

գրութիւնն մարդուս միտքն բոլորովին ա-
զատեց 'ի գերութենէ։ Իրաւ քան զայլ
ամենայն գրութիւնս՝ ինքն եղաւ ճեմա-
կան և գաղտնական լուծն խորտակողն,
բայց ոչ եթէ յայտնապէս ապստամբաղմե-
լով ընդդէմ իշխանութեան, և ոչ ամէն
բանի մէջ բացայայտութիւն պահանջելով։
Կարգեսիոսի ազդեցութեան գլխաւոր հի-
մքն էր այն ազատութիւնն բանաւոր՝ զոր
իրմէ առաջ եղած վերանորոգողք շատ ան-
գամ յօգնութիւն կանչած էին իրենց, բայց
անկէց օգուտ մի չէին տեսած։ Բարոյա-
կան և կրօնական մեծամեծ ճշմարտու-
թեանց այնպիսի հաստատուն ապացոյցեր
հնարեց՝ որ իմաստասիրական ուսմանց
բոլորովին ներհակ եղողներուն միտքն ալ
բժշկեց և իմաստասիրութեան բարեկամ
ըրաւ զանոնք. այնպէս որ բաց 'ի քանի մի
յամառ մոլեռէ, ակամաւոր մատնեա-
գրաց մէկն անգամ մոաց բնական ուժն
և զօրութիւնն շկրցաւ ուրանալ։ — Իրաւ
է որ Կարդեսիոս նոր սկզբնաւորութիւն
մի տուաւ իմաստասիրութեան ընթացքին՝
որ էր ծանօթութիւնն խորհրդոյ և անձնա-
ւորական զոյութեան, և մեծ արդիւնք ալ
ունեցաւ այս բանիս մէջ ստկայն իր վար-
դապետութեան և գրոց մէջ այնպիսի սեր-
մանք ալ կան՝ որ յանդուգն մարդկանց
ձեռքն շատ անիծապարտ պատուղներ պիտի
բերէին։ Ամէն բան երկմտութեամբ սկսե-
լու համար տուած սկզբունքն և օրինակն՝

սկեպտականութեան ձեռնտու ըլլալ էր։ և ինքնիրեն ևնթ խորհելու գոռոզ պարծենկոտութիւնն շափազանց անիշխանութեան կը վարժեցնէ զմարդ։ Ցարակոյս չկայ որ ինքն անկեղծ քրիստոնեայ էր, և բացարձակ հպատակութիւն կը գաւանէր եկեղեցւոյ որոշմանցն, սակայն ռամկին հաւատոց վրայ ցցուցած արհամարհութիւնն՝ պատճառ եղաւ որ իր աշակերտներէն ոմանք մոլորեցան, որոնք այն զէնքերն որ նախապաշարմանց դէմ պիտի գործածէին՝ նոյն իսկ 'ի հաւատոց աւանդեալ ճշմարտութեանց դէմ դարձուցին։ Այս վտանգներս զորս Կարդենալս չէր կրցած նախատեսել, և զորս եթէ ճանչնար՝ անշուշտ ետ կը քաշուէր՝ Պոսիւէի արծուաթռիչ մտաց առջին էին՝ երբ աս հեռագայ մարգարէական տողերս կը գրէր՝ որք շատ անգամ յիշուած են. «Ընդ անուամբս իմաստասիրութիւն Կարդենեան՝ ճակատամարտ ահեղ տեսանեմ պատրաստեալ ընդդէմ եկեղեցւոյ. քանզի 'ի ծոցոյ նորին և 'ի սկզբանց՝ զորս, ըստ իս, ոչ ուղիղ իմացան մարդիկ, տեսանեմ ծագեալս հերձիս բազմապատիկս. և ասացս՝ մին իսկ նկատեմ զի հետևութիւնքն զորս 'ի նոցանէ յառաջ ածեն ընդդէմ հայրենաւանդ վարդապետութեանց՝ առելի ընդնոյն արասցեն, և իմաստասիրութիւնդ՝ յորմէ յուսայր եկեղեցի կանգուղել 'ի միտս իմաստնոց զգոյութիւն աստուածութեանն

և զանմահութիւն հոգւոյ, պաղատկորոյս լիցի՝ ի ապառ ատկս նորա և անպէտ՝ ի նորին արքանեկութիւն [1] »։

Պաւռնէն և Կարդեսիոսէն եռեւ յաջորդած արդի իմաստասիրութեան դպրոցներն.

Պաւռնէն և Կարդեսիոսէն եռեւ արդի իմաստասիրութեան պատմութիւնն երեք շրջանի կրնայ բաժնուիլ. որոնցմէ առջինն ինչուան Լայպնից կը հասնի. երկրորդն Լայպնիցէն ինչուան ութեւտասներորդ դարուն վերջն. երրորդն ութեւտասներորդ դարուն վերջէն ինչուան մեր օրերն։ — Եւ նախ Պաւռնէն և Կարդեսիոսէն եռեւ՝ իմաստասիրութիւնն գլխաւոր երկու դպրոց կը բաժնուի՝ որոնք այս երկու մեծագլուխ արանց հանճարոյն հաւատարիմ կը մնան։

Պաւռնի դպրոցին մէջ գլխաւոր իմաստասէրքն են Հոպս, Կասանոսի և Լոք, թէ և այս դպրոցն զՊաւռն յայտնապէս իւր գլուխն չճանչնար։

ՀՈՊՍ. — Ծնեալ՝ ի Մալմսպերի յամին 1588 և վախճանեալ՝ ի 1679. բարեկամ ըլլալով Պաւռնի՝ անոր գրուածոց մի մասն յանգլիարէնէ՝ ի լատին թարգմանեց. ըստ Հոպսի ոչ այլ իրականութիւնք զոն՝ բայց մար-

1 Թուղթ առ աշակերտ ոք Հ. Մալպրանշի։

մինք միայն, և ոչ այլ ծագումն գաղափարաց մերոց՝ բայց զգայութիւն ևնթ, և ոչ այլ վախճան բնութեան մարդոյ՝ բայց երջանկութիւն։ Ի միճակի բնութեան ամենեքեան ունին իրաւունս առ ամենայն, որով և միճակ բնութեանս է պատերազմ հանրական մարտ ամենեցուն ընդդէմ ամենեցուն։ Այս պատերազմս չկրնալով գադարել՝ բայց եթէ հզօր տէրութեան մի հաստատութեամբն՝ որով հակառակամարտ կիրք կարենան ընկճել, Հապա կը ստիպուի բացարձակ բռնաւորութիւնն գերազանց կառավարութեան կերպ համարիլ մարդկային ընկերութեան։

ԿԱՍԱՆՏ. — Կոչեցեալ Թէնման ծնեալ'ի Բրոմանս 'ի 1592 և մեռեալ 'ի 1655. ամենէն գիտունն էր յիմաստասէրս և ամէնէն հանճարեղ իմաստասէրն 'ի մէջ գիտնոց. Եպիկուրոսի վարուց և վարդապետութեանց վրայ զարմանալի բացատրութիւններ գրած է՝ որուն գրութիւնն նորոգեց իր Հաւաքածու իմաստասիրական գրոց մէջ. անուանի եղաւ նաև Արիստոտելի դէմ գրուածքներովն, և Կարդեսիոսի խորհրդածուրեանց դէմ հակառութեամբն։

ԼՈՔ. — Ծնեալ 'ի Բրինբթըն մերձ 'ի Պրիսթոլ 'ի 1632 և մեռեալ 'ի 1704. մարդուս ներքին իրաց գիտութեան վրայ գիտողութիւնն ալ աւելցնողներուն առջինն էր մեկն եղաւ, և թէպէտ շատ մոլորութեանց մէջ ընկաւ՝ սակայն հոգէբանու-

թեան ուսմանց ճշմարիտ հիմնադիրն կըրնանք համարիլ զինքն. իր գրուածոց մէջ ամէնէն երևելին ճաշակ սակս հաւակացողութեան ըսած գիրքն է շորս մասն բաժնուած. առջինին մէջ կը ջանայ հերքել ինքնածին գաղափարաց գրութիւնն՝ զոր կընդունէին Կարդեսեանք. երկրորդին մէջ Լոք այս սկիզբէս սկսելով թէ Ձիք ինչ 'ի հաւակացողութեան՝ որ չիցէ լեալ 'ի զգայութիւնս՝ մեր պարզ գաղափարներն զգայութեան և անդրադարձութեան ձևոք կը բացատրէ. իսկ բաղկացու գաղափարներն՝ այն աշխատութեամբ՝ զոր ունի հոգին պարզ գաղափարաց վրայ։ Յետագայ գրոց մէջ կը խօսի նշանակաց և լեզուի խորհրդոյ հետ ունեցած յարաբերութեանց վրայ. իսկ վերջին գրոց նիւթն է մարդկային ծանօթութեանց ուժն, սահմաններն և զանոնք ստանալու այլ և այլ կերպերն։ Լոքի վարդապետութիւնն իր աշակերտաց ձեռօք տարածուելով՝ իմաստասիրութեան Փրանկիոյ և Անգլիոյ մէջ յառաջադիմելուն մեծ պատճառ եղաւ։

Մինչդեռ Պաքոնի գպրոցն փորձառական և զգայական ճամբով մի կընթանար, Կարդեսիոսի գպրոցն կը փառաւորէր՝ շատ մի գաղդիացի բարոյագէտներ և աստուածաբաններ իրեն հետևող ունենալով՝ որոնք ծաղկեցան եօթնեւտասներորդ դարուն մէջ, ինչպէս Պասքէլ. Նիքոլ. Արնոլ. Ֆենելոն. և այլն. ասոնց հետ նաև

երկու հռչակաւոր բնաբանագէտ Մալպրանշ և Սփինոզա։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱԼՊՐԱՆՇ ազգաթափանից կարդէն, ծն. 'ի Փարիզ յամին 1638 և մեռեալ 'ի 1715. բարձրագոյն իմաստասիրութեան վրայ գրուածներ ունի՝ որոնց մէջ ամէնէն համբաւաւորն է խոհզարկութիւն ճշմարտութեան ըստուածն։ Կարդեսեան քանի մի գաղափարներն ընդարձակելով պարտաւորեցաւ արարածոց գործնականութիւնն նուազել՝ արարչին գերագոյն գործնականութիւնն աւելցնելու համար. և այս ընդհանուր սկիզբէս երկու հետևութիւն հանեց. առջինն թէ մենք նկատելի յԱստուած զամենայն առարկայս ծանօթութեանց մերոց՝ ոչ միայն զհարկաւոր ճշմարտութիւնս, այլ և զմարմնեղէն գոյացութիւնս. և երկրորդ թէ մարմինն ոչ ազդէ 'ի հոգին, և ոչ հոգին 'ի մարմինն, և ոչ մարմինք յիրեարս. այլ Աստուած 'ի ձեռն կերպաւորութեանց ինչ նիւթոյ՝ զհանգուանատիպ կերպաւորութիւնս ներգործէ յայլ նիւթս։ Այս տեսութիւններէս մին Ցեսուրիան յԱստուած կը կոչուի, և միւսն ենթադրութիւն Պատահական պատճառաց։ Մալպրանշ իր յանկարծագէպ հայեցողութիւններն ամբողջացնելու համար՝ ըստ կամի գրութիւն մի ալ հատատեց այն օրինաց վրայ՝ որոնք տեսչութիւնն աստուածային կը վարուի իր շնորհքն մատակարարած ժամանակ։ Սատանկով աշխարհս ամենակատար

սեպագնեբուն կարծեացն կամ անթերա-
կարծից կը մնանեայ նոր օրինակ կերպով
մի, և սակայն աստուածային աղաղու-
թիւնն բոլորովին կեղծանէ։

Հրեայն ՅՈՒՍՈՒՍ ծնեալ յԱմթէրտամ
'ի 1632 և մեռեալ 'ի Լա Հէյ 'ի 1677, Մալ-
պրանշի ճամբուն մէջ աւելի առաջ երթա-
լով Համաստուածութեան մէջ ընկաւ. բան
իր կարծեաց ենթակայութիւնն կամ գոյա-
ցութիւնն մի է՝ որ է Աստուած, և որուն
շատ ստորոգելեացմէ երկուքն միայն մեզ
ծանօթ է ծաւալն և խորհուրդ։ Ամենայն
որ ինչ յաշխարհի է, կերպ ինն է աստուա-
ծային ծաւալման, որպիսի են նիւթեղէն
առարկայք և կամ աստուածային խորհուրդ,
որպիսի է հոգին։ Հոգւոյ և մարմնոյ
միութիւնն ոչ այլ ինչ է՝ բայց գաշնակաւո-
րութիւն ստորոգելեացն Աստուծոյ զար-
գացելոց՝ որ միշտ յիրենարս անդրադառ-
նան։ Աստուած զոլով էակ հարկաւոր՝
զոր նորա ոչ յառաջեն յաղատ ընտրու-
թենէն, այլ հարկաւորեալ են 'ի բնութե-
նէն։ Ապա չէ յԱստուած ոչ իմաստու-
թիւն, ոչ արդարութիւն և ոչ տեսչու-
թիւն. և տգիտութիւն ենթ և կանխակալ
կարծիք՝ կատարելութիւնս են համարել
ռամկին զայսոսիկ ստորոգելս։ Սփինո-
զա իր վարդապետութիւնն բացատրեց իր
Բարոյականին մէջ 'ի ձեռն առածից, սահ-
մանաց, հայեցուածոց և պարապմանց որ-
պէս առնեն երկրաչափք։ Այլ այս ոճոյ

արտաքին հշդութեան տակն ծածկեալ կան մեծամեծ թերութիւնք մահաբեր դրութեանն՝ որ ողջամտութեան նախկին սկզբանց ալ հակառակ կելլեն, և բոլոր կրօնքըն ու բարոյականն կեղծանեն։

Կարգեսեան վարդապետութեան վիճաբանութեանց ժամանակ 'ի վեր երևեցաւ և սկեպտականութիւնն զոր արդէն վերջատաանները դարուն մէջ պաշտպաններ էր Մոնթէնեը և իւր աշակերտն Շարրոն, և եօթնեւտաանները դարուն մէջ ալ Լա Մոթը Վէրէ գաստիարակ արքայորդւոյն Փրանկիոյ, Դանիէլ Հիւէ եպիսկոպոսն Ավրանշի, և Պետրոս Պայլ դրիչ բազմապատիկ գործոց և հռչակաւոր Պատմական և դատաբանական բառարանին։ — Խորհրդաբանական վարդապետութիւնն այլ և այլ կերպարանաց տակ կը ծաւալէր 'ի ձեռն Հենրիկոսի Մոր՝ որ Կարդեսիոսի հակառակորդներէն էր, Պետրոսի Բուարէ, և մանաւանդ 'ի ձեռն անդորրակեանաց. որոնց մէջ գտուեցաւ առ ժամանակ մինեան Ֆեններան։ Վերջապէս երևեցաւ Լայպնիցի որով կը փակուի արդի իմաստասիրութեան առաջին շրջանն։

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԼԱՅՊՆԻՑ ծնեալ 'ի Լիբսիա յամին 1646 և մեռեալ յամին 1716. անշուշտ արդի ժամանակաց ամենէն հանրածաւալ հանճարն է՝ ինչպէս էր Արիստոտէլ 'ի հնումն. վասն զի հաւասարապէս յաջողեցաւ ոչ միայն իմաստասիրութեան մէջ,

այլ և 'ի պատմութեան, յիրաւագիտութեան, 'ի շափաբերութեան և յաստուածաբանութեան։ Խմաստասիրութեան մէջ երկու հակառակամարտ դպրոցաց մէջ տեղն կեցաւ, Լոքի և Կարդեսիոսի։ Լոքի դէմ հաստատեց թէ ամէն գաղափարք 'ի զգայութեանց շեն յառաջեր, և մերժեց այն հաշակաւոր առածն որ կըսէր Զիր ինչ 'ի միտս որ յիցէ նախ չեալ 'ի զգայութեան, և ընդունելու համար հարկաւոր կը սեպէր գոնէ այս ալ աւելցնել երբ ոչ միտքն ինքնին։ Իսկ ընդդէմ կարդեսեանց առարկեց թէ իսկութիւն մարմնոյ ոչ է 'ի տարածին, և ոչ իսկութիւն հոգւոյն 'ի խորհրդեան, այլ զի ամենայն ենթակայութիւն իսկապէս է գործնական։ Այս սկզբունքէս սա հետևութեան հասաւ թէ բաղկացու առարկայք, որպիսի են մարմինք, կարեն վերածիլ 'ի պարզ տարերս ունողս գործնականութեան, զորս և կոչեաց միաճառս։ Այս միահատից իրարու հետ ունեցած յարաբերութիւններն գննելով խորհեցաւ որ իրարու վրայ շեն ներգործեր, քանզի այսու իրարու բնութեան օրէնքն խռովել կըլլար, այլ զօրութեամբ նախակարգեալ գաշնակաւորութեան մի՝ ամէնն ալ միօրինակ կը զարգանան, նման շատ մի ժամացույցից որ մի և նոյն ժամն լարուած ըլլան՝ որք ցյաւելեանս շեն շփոթիր։ Խմաստասիրութեան մասանց մէջ ասուածաբանութիւնն աւելի մշակեց Լայպնիցն. և

բան նորա՝ որովհետև Աստուած յանհունս խմաստուն կարող և բարի է՝ հարկ էր որ կարելի աշխարհաց մէջ ամէնէն բարեգոյնն ստեղծեր, թէ և բոլորովին ազատ շըլլայ 'ի ստեղծական թերութեանց, սակայն այնպէս որ շարն 'ի նմա ըլլայ պայման բարոյ թէ 'ի բնական և թէ 'ի բարոյական կարգի։ Այս անթերակարծ տեսութիւնն կերպով մի կը լուսաւորէ այն դժուարութիւններն որ յառաջ կուգան 'ի ծագմանէ շարի. բայց իրեն դէմ ալ ծանր առարկութիւնք կելլեն. անոր համար շատերն դիրքն մեզագրեցին՝ իրրև ճակատագրի վարդապետութեան սկզբունք սերմանող։

Այսպիսի երկու գլխաւոր գործեր թողուց՝ մէկն ճաշակք աստուածախօսութեան յաղագս ազատութեան մարդոյ և բարութեանն Աստուծոյ, որ Պայլի շափաբանցութեանց պատասխան կը սեպուի, և միւսն 'ի որ ճաշակք յաղագս հասկացողութեան մարդոյ՝ որ Լոքի նոյն նիւթոյն վրայ գրուածին հերքումն է։ Սակայն իւր վարդապետութեան լիովին ու կարգաւորեալ բացատրութիւնն իր գրուածոց մէկուն մէջ ևս չենք գտներ։ Այս գործս իր մեռնելէն ետև կատարեց ՓԻԼԻՊՊՈՍ ՎՈՒՅԹ իւր ամէնէն համբաւոր աշակերտն ծնեալ յամին 1679 և մեռեալ 'ի 1754, որ իւր գաղափարութիւններովն և գրքերով իր վարժապետին կարծիքներն բացատրեց և տարածեց։ Իսկ իրմէ ետև ոմանք հակառակելով և ոմանք պաշտ-

պանելով Լայպնիցի իմաստասիրութիւնն՝ անոր շուտով անկանելուն պատճառ եղան։

Իսկ Անգլիոյ մէջ՝ բաց 'ի քանի մի հոգւոյ՝ շատերն Լոքի վարդապետութեանցն հետևելով գիմադարձ և չափազանց կարծիքներ երևան եկան՝ որ փորձառական սկզբանց արգասիքն էին։ Մինչդեռ Սամուէլ Քլարք զօրաւոր պատճառաբանութեամբ կը ցուցնէր հոգւոյ անմահութիւնն և ազատութիւնն՝ ընդդէմ Տոուէլի և Քոլլինսի՝ որ անոնց վրայ կը տարակուսէին, անդին Պըրքլի (1684–1759) կը համարէր թէ նիւթեղէն աշխարհքս չկայ, և իրակութիւնք՝ զաղափարք միայն են և ենթական խոհուն՝ որ անոնց գիտակցութիւնն ունի, և Աստուած՝ որ զանոնք յառաջ բերէ։ Պըրքլի կը յուսար որ իր վարդապետութեամբն մահացու վէրք մի տայ նիւթականութեան և անաստուածութեան. բայց քիչ ատենէն եկաւ Դաւիթ Հիւմ (1711–1776) որ Պըրքլիի նիւթոյ դէմ բրած առարկութիւններն հոգւոյ գոյութեան դէմ դարձուց. պատճառի և ենթակայութեան ծանօթութեանց ճշմարտութիւնն հերքեց, և մեր ամէն ճանաչողութիւններն 'ի սովորութենէ յառաջ եկեալ կամաւոր տպաւորութիւններ համարեցաւ. որով և այն ատեն իմաստութեան գերագոյն ծաղ համարեցաւ սկեպտականութիւնն կամ թէ ուելի ոչնչակարծութիւնն։

Այն ատենները Ֆրանկիոյ մէջ երևե-

ցաւ ՖՐԱՆՏԻՑԵԱՆ (1745–1780) որ կարդեալ-
կանութիւնն թողով և Լարի վարդապե-
տութիւնն ընդունելով՝ մեր ամէն գաղա-
փարներն մէկ ծագման կը վերածէր, ամէն
կարողութիւնքս մէկ սկզբան՝ որ է զգայո-
ղութիւնն։ Այս անկատար հոգեխօսու-
թիւնէ՝ որուն մէջ մասնական ճշմարտու-
թիւնք կը փայլին, առաջ եկաւ այլ անկա-
տար բարոյական մի՝ ինչպէս էր ՀԵԼՎԵՏԻՈ-
ՍԻՆՆ, որ մարդկային գործոց ուրիշ վախ-
ճան չգիտեր՝ բայց 'ի հաճոյից. ուստից քիչ
առնէն ծագեցաւ մեծատակար գրութիւնն
ՀՈԼՊԱԽԻ և ՏԸ ԼԱ ՄԷԹՐԻ՝ որուն գէմ գրնե-
ցաւ Ց. Ց. Ռուսսոյ։

Այս տխուր հետևութիւններս՝ փորձա-
ռական ութեան թերութիւններն երևան
հանելով՝ ընդհանուր նորոգութեան մի
կարօտութիւն յայտնի եղաւ, որ Գեր-
մանիոյ մէջ ալ շատ հարկաւոր կերևե-
նար Լայպնիցի գաղրոյին անկմամբն։ Ութ-
ևտասանեարդ դարուն վերջերն այս նո-
րոգութիւնս Սկոտիոյ մէջ 'ի գործ դրաւ
ԹՈՄԱՍ ՌԻՏ. և Գերմանիոյ մէջ Քանթ,
որոնց ձեռքովն կը սկսի յետին շրջան ար-
դի իմաստասիրութեան։

ԹՈՄԱՍ ՌԻՏ ծնեալ 'ի Կլէսգո 'ի 1704 և
մեռեալ 'ի 1796՝ 'ի մանկութեան Լարի տե-
սութիւնն ընդունած էր որ յաղագս մարդ-
կային ճանաչողութեան. բայց անոր սար-
սափելի հետևանքն տեսնելով, և Հրուսի
սկեպտականութեան գէմ թուսը մի կանգ-

նել ուզելով՝ ստիպուեցաւ մարդկային մը-տաց մէջ այնպիսի սկզբունք ճանաչել՝ որ՝ի փորձառութենէ առաջ չեն գար՝ այլ մեր մտաւորական կազմութեանն մասն են։ Իրեն գրուածոց մէջ մասնաւոր խնամքով և ճշգութեամբ խօսած նիւթն է տեսութիւնն արտաքին ըմբռնողութեան՝ զոր զտեց յառաջբերական գաղափարաց ենթադրութենէ։ — Ինքն աշակերտ եղաւ Տիւգալ Սթիւարտ մեռեալ՝ի 1828՝ զոր բազում անգամ յիշած ենք գասախօսութեանցս մէջ։

Իմմանուէլ Գանթ ծնեալ՝ի Քէօնիկսպէրկ՝ի 1724 և մեռեալ՝ի 1804, Ինքն նման այնպիսի սկզբունք ընդունեցաւ՝ զոր գիտողութիւնն չէր կրնար մեզ յայտնել, և զորս իմացողութեան ձեւս և կերպարանս Համարեցաւ։ Բայց սկսմատցի իմաստասէրներէն ուրիշ յառաջ վազելով՝ այս ձեւերս կամ սկզբունքս երեք գասի բաժնեց՝ մտաւորական երեք կարողութեանց Համեմատ, զգացողութիւն, Հասկացողութիւն և բան, և այս գասերէն իւրաքանչիւրն՝ի բազում երկրորդական տեսակս։ Մարդկային ճանաչողութիւնն յառաջ գայ՝ի միաբանութենէ նիւթոց, ՝ի գիտողութենէ տուելոց և՝ի ձևոց իմացողութեան տպաւորելոց՝ի նիւթքս, որպէս կնիք որ տպաւորի՝ի կնքամոմն։ Սկզբունք բանին չունին ինչ զօրութիւն արտաքոյ փորձառութեան։ Այս սկիզբէս նորատեսակ

սկեպտիկանութիւն մի յառաջ եկաւ ուս-
կից շիրցաւ խորհիլ Քանթ 'ի բարոյական
մասին՝ բայց եթէ աւելի զօրութիւն մի
տալով գործնական բանին քան հայեցո-
ղականին։ — Կարդեսիոսէն եւեւ Լեբ-
նիցիոյ մէջ եղած իմաստասիրական ցնցման
և շարժման ամէնէն մեծ պատճառն Քանթ
եղաւ. և ժամանակակից գերմանական ի-
մաստասիրութեան մեծամեծ անուններն
անոր հետ կապուած են, որպիսի են։

Ֆիխթէ գերմանացի և աշակերտ Քան-
թի (1772–1814) իր վարժապետին սկզբ-
բունքն ինչուան ցյետին հետեւութիւնն կը
հասցնէ, և կը ցուցնէ թէ եսէն զատ ի-
րական բան մի չկայ։

Շելլինգ գերմանացի (1775–1854) ամ-
ենայն էակի և ամենայն ճանաչողութեան
առաջին սկիզբն կը դնէ յէական բացարձակ՝
որ է նոյնութիւն եսի և ոչ եսի. այսինքն
համաստուածութիւն։

Հեգել գերմանացի աշակերտ վերնոյն,
(1770–1831) նոյնպէս ուսուցանէ զհամա-
ստուածութիւն. ըստ նորա 'ի բանէ ծագի
գաղափարն, գաղափարն արտադրէ գնիւ-
թեղէն աշխարհս՝ որ յինքեան և արտաքոյ
մերոյ. մտացս ոչինչ է, և 'ի գաղափարի
մերում միայն ունի զգոյութիւն. յետոյ
գաղափարն յինքն անդրադառնայ և ճա-
նաչէ զինքն էակ միակ. որով բոլանդակ
իմաստասիրութիւնն Հեգելի կըլլայ հոգին
դանձն Աստուած համարող։

Տը Պոնալ (1753–1840) համարի թէ մարդս զաղափար չկրնար ունենալ՝ առանց բարբառոյ, և ինչ որ բարբառով մեզ հասած է՝ զայն միայն գիտենք. որ է աստուածաբանութիւն։

Լա Մրնէ (1780–1835) կը պնդէ թէ մէկ հատիկ միջոց միայն կայ աստուածութեամբ ճանչնալու՝ որ է միաձայն հաւանութիւն մարդկան։

Այսօրուան օրս ողջամիտ իմաստասիրութիւնէն զատ՝ չորս իրարու ներհակ գրութիւնք կան՝ որ ամենուն միտքն կուզեն գրաւել, բայց ոչ երբէք պիտի յաջողին. այս գրութիւններս են աստուածաբանութիւնն և բանաւորականութիւնն, գրականութիւնն և էակականութիւնն։

Աստուածաբանութիւնն որ Պոնալէ և Լա Մրնէէ առաջ եկաւ՝ կը համարի թէ մեր աւրիշ բան չենք կրնար գիտնալ՝ բայց ինչ որ ուսմամբ մեզ փոխ անցած է։

Բանաւորականութիւնն ծագեալ ԺԸ. դարու աստուածեան աղանդէն՝ զայն միայն կընդունի զոր հնար է ապացուցանել բանիւ։ Առնցմէ ոմանք կը պնդեն թէ մարդկային բանն առանձինն կրնայ ամէն իրաց հատու ըլլալ և զանոնք մեկնել, նոյն իսկ յայտնեալ խորհուրդներն, ևս և Երրորդութեան խորհուրդն։

Առանկ ըլլալով աստուածաբանութիւնն և բանաւորականութիւնն երկու հակառակ ծայրերն կըլլան. որով մէկն կըսէ թէ

Մարդ մինակ իր բնական բանիւն չկրնար իր մի ճանչնալ. և միւսն կրսէ թէ Մարդ մինակ իր բնական բանիւն ամենայն ինչ կրնայ ճանչնալ։

Դրականութիւնն պարզ նիւթականութիւն է՝ որ է իրական սեպել միայն այն իրն որ զգացութեանց տակ անկանի։

Էակականութեան հնդինակն Մալպրանշ է. որ ուսուցանէ թէ մենք չկարենք ինչ ճանաչել առանց զաղափարի անհուն էակին որ է Աստուած՝ յոր միայն ճանաչելիք զոր ինչ ճանաչելիք։ Սատանիզմ ըստ նոցա, իմացողութիւնս մեր տեսանէ զնոյն ինքն զէակն Աստուծոյ, և յաստուածային էակս յայս, և յաստուածային էութեանս անմիջնորդաբար ըմբռնելոյն՝ տեսանելիք զոր ինչ տեսանելիք։

Մէկ նկատմամբ էակականութիւնն և դրականութիւնն երկու ընդդիմակաց բնութեամբ են. առաջինն միայն զԱստուած տեսանելով և զամենայն ինչ յԱստուած. և երկրորդն ոչ այլ ինչ տեսանելով բայց զՏընաւորն և զզգային։ Առջինին համար արտաքոյ Աստուծոյ իմացական իր մի չկայ, որով և հետևապէս իրական ինչ ալ չկայ. իսկ երկրորդին համար չկայ ինչ իրական, և հետևապէս և ոչ իմացական ինչ բաց 'ի նիւթոյ։

Կան նաև ասունցմէ դուրս երկու դրութիւնք, ընտրականութիւն և ոգեկանութիւն։ Ոգեկանութիւնն հաստատեալ է 'ի

ճանաչել զգոյութիւն և զաննիւթականութիւն հոգւոյ. որ է գրականութեան հերքումն։ Իսկ ընտրականութիւնն այնչափ հին է որչափ և իմաստասիրութիւնն. և առանձինն ոչ գրութիւն է և ոչ գպրոց կամ աղանդ։ Ամէն ծանրագլուխ իմաստասէր ընտրական է. վասն զի ինչ անտեղի յանդգնութիւն կլլար՝ եթէ առանձինն մարդ մի՝ որչափ ալ հանճարաւոր ըլլայ՝ համարէր թէ ինքն միայնակ և առանց իրմէ առջիններէն օգտուելու՝ նորէն պիտի կանգնէ իմաստասիրական գիտութեան բովանդակ շէնքն։

Եթէ ոգեկանութիւն ըսելով ուրիշ բան չհասկցուիր բայց եթէ վարդապետութիւն այնոցիկ՝ որ ճանաչեն զգոյութիւն միոյն Աստուծոյ որ է հոգի աննիւթ, և զգոյութիւն հոգւոյ 'ի մարդիկ՝ այն ատեն այս ալ զատ գրութիւն մի կամ իմաստասիրական առանձին գպրոց մի չձևացներ. քանզի ամենայն ճշմարիտ իմաստասէր այս միտքովս ոգեկան է և պէտք է ըլլայ։

Պլատոնի, Արիստոտելի, Սրբոյն Աւգոստինոսի և Սրբոյն Թովմայի վարդապետութիւնքն նոյն ըլլալով այն ողջամիտ վարդապետութեանց հետ՝ զորս բովանդակ համառօտութեանս մէջ բացատրեցինք՝ հարկաւոր չսեպեցինք անոնց վրայ կրկին տեսութիւն մի ընելու։

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ. — Իմաստասիրութեան պատմութեան առարկայն . 5
Իմաստասիրութեան պատմութեան օգտակարութիւնն 6
Իմաստասիրութեան պատմութեան ուսման ոճին վրայ 8
Իմաստասիրութեան պատմութեան գլխաւոր շրջաններն 10

ՆԱԽԿԻՆ ԴԱՐ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱԶԳԱՑ. — Իմաստասիրութիւն Հեբրայեցւոց 13
Իմաստասիրութիւն Քաղդէացւոց . . . 14
Իմաստասիրութիւն Պարսից և Հայոց . . 16
Իմաստասիրութիւն Արաբացւոց . . . 17
Իմաստասիրութիւն Փիւնիկեցւոց . . . »

Իմաստասիրութիւն Եգիպտացւոց . . . 18
Իմաստասիրութիւն Ճենաց 20
Իմաստասիրութիւն այլոց ազգաց . . . 21
ՅՈՒՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. — Աղանդք յունական իմաստասիրութեան յառաջ քան զՍոկրատ 22
Իտալական դպրոց 27
Հիւլէական դպրոց 30
Դպրոց իմաստակաց 31
Սոկրատ և յեղափոխութիւն իմաստասիրութեան 'ի ձեռն նորա 33
Կենսագրութիւն Սոկրատայ . . . . . »
Գլխաւոր դպրոցք յետ Սոկրատայ մինչև ցդպրոցն ալէքսանդրեան 38
Մեգարեան դպրոց . . . . . »
Կիւնիկեան դպրոց 39
Կիւրենեան դպրոց . . . . . »
Ակադիմեայ 40
Լիկէոն 42
Սկեպտականք 46
Եպիկուրեանք 47
Ստոյիկեանք 49
Միջին և նոր Ակադիմեայ 51
Նոր սկեպտականք 55
Ընարականք 57
Պլատոնեան կրսերք 59
ՅԱՒԵԼՈՒԱԾ. — Իմաստասիրութիւն Արաբացւոց 60

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՍՈՒՍԱՓԱՌՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԻՋԻՆ ԴԱՐ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ. — Ինչերորդ դարէ՝ երկոտասանչերորդ դարուն վերջն. Բացարձակ հպատակութիւն իմաստասիրութեան առ աստուածաբանութիւն 63
ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ. — Երկոտասանչերորդ դարուն վերջէն՝ ցչորեքտասանչերորդ. Իմաստասիրութեան և աստուածաբանութեան զուգակցութիւն . . 67
ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ. — Չորեքտասանչերորդ դարէ ցմինչեւ տասանչերորդ. Իմաստասիրութեան և աստուածաբանութեան աստիճանաբար իրարմէ զատուիլն . 70

ԱՐԴԻ ԴԱՐ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Պաքոն և Կարդեսիոս. 73
Պաքոնէն և Կարդեսիոսէն ետև յաջորդած արդի իմաստասիրութեան դպրոցներն 81

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԵԼՔՈՆԵԱՆ
ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖԱՄԻԼԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԵԼՔՈՆԵԱՆ ՖԱՄԻԼԻԱՅԻ